№ 149 ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒԼԻՍԻ

1915

ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 11 ՅՈՒԼԻՍԻ № 149

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ՍՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տ ե լ ե ֆ օ ն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տ ե լ ե ֆ օ ն № 67.

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակադրոշմ: ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել՝ I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպէկ:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հ. Կ. ԱԶԳԱՅԻՆ ԲԻՒՐՕՅԻ կողմից սրանով յայտարարվում է, որ կիրակի, յուլիսի 12-ին, Վանքի մայր եկեղեցում, պատարագից յետոյ ժամը 12-ին, նշանակված է ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ հանգուցեալ պօրուչիկ՝ Բաքւի շրջանի հայկական գնդի հրամանատար՝

ԳՐԻԳՈՐ ԱՒՇԱՐԵԱՆԻ

460. յիշատակին: 2—1

«ՄՇԱԿԻ» ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ կազմած
ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶԸ
փոքրադիր: Հատը 5 կոպէկ: Ճանապարհածախքով հատը 8 կ.: Գումարով գնողներին զեղչ.

ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆ

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆԸ իր օվսաննան նուիրաբերելու համար, երկուշաբթի, յուլիսի 13-ին, երեկոյեան ժամը 8-ին հրաւիրվում են Սալոնի մշտական անդամները, արուեստագէտները, գեղագէտները, գրականագէտները, լրագրողներն իրանց ընտանիքներով և Սալոնի մշտական հիւրերը Միքայէլեան պրոսպէկտի վրա, (Մուշտայիդի մուտքի առ. առաջ) Ակվարիում այգին: 13. 2—1

Ալեքսանդրոպոլի Իշխան Արղութեան-Երկայնաբազուկի անուան օրիորդաց միջնակարգ դպրոցի համար հարկաւոր է

ՏԵՍՈՒՉ

բարձրագոյն կրթութիւնով և փորձված: Ցանկացողները՝ պայմանների մասին բարեհաճեն դիմել հոգաբարձութեան:
(առ.) 453. 4—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ

Նախկ. օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստ. պրոֆ. Պօզնէրի:

Նախկին տարիների նման կընդունէ հիւանդներին մայիսի 1-ից Կովկասի հանքային ջրերում՝ Պեատիգորսկում, Ելիզավէտինսկայա փողոց, տուն Արխիպովի, ռուսաց սոբորի դիմաց, տէլէֆ. № 276:
առ. (ե. հ. կ.) 248. 30—27

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

10 յուլիսի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական: Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Յուլիսի 8-ին ծովամերձ շրջանում ուժեղ հրացանաձգութիւն էր:

Օլթիի ուղղութեամբ, Թէվայի շրջանում մեր հետախոյզ զօրախմբերը ընդհարվում են թիւրքերի հետ: Նոյս յուլիսի 8-ի գիշերը թիւրքերը յարձակում գործեցին Հէյ-դաղ սարի վրա, բայց վանվեցին: Ցերեկով թիւրքերի երկու բատալիոն նորից յարձակվեց Հէյ-դաղի վրա, բայց ցիրուցան արվեց մեծ կորուստներով:

Կոպի շրջանում կռիւների ընթացքում գերվել են 10 թիւրք օֆիցէր և 400 զինուոր:

Մուշի ուղղութեամբ մեր զօրքերը, հալածելով թիւրքերին, հասան Աւսպէնիս գիւղին:

Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ:

ՌՈՒՍԱՑ ՆԱՒԱՏՈՐՄԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ՍԵՎԱՍՏՕՊՕԼ.—Երէկ մեր ականանաւերը ջրասուզեցին թիւրքական երկու մեծ առագաստանաւ, որոնք աշխատում էին նաւթ անց կացնել Ռումինիայից Կ. Պոլիս:

Նաւաստիները ափ հանվեցին:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԷԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ԱԹԷՆՔ.—Հաղորդում են, որ Մարմարա ծովում գտնվող անգլիական սուզանաւերին աջողվել է ջրասուզել ռազմամթերք բեռնած մի քանի մեծ նաւ:

Տենէդոս կղզուց տեղեկացնում են, որ կռիւները Գալիպօլի թերակղզում շարունակվում են երեք օր շարունակ անսովոր կատաղութեամբ: Դաշնակից զօրքերը գրաւել են մի քանի զօրագիծ:

Անգլիական մի ռազմանաւ կարողացաւ մտնել Բօսֆոր և ական ձգել Անգլրկաւիւ մօտ խարիսխ ձգած խոշոր նաւերի վրա:

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ԱԹԷՆՔ.—«Պատրիս» և «Հէստիա» լրագիրների առելով, յունաց կառավարութիւնը նախազգուշացրել է Բ. Դրան, որ նա ստիպված կը լինի անվաւեր համարել յոյն-թիւրքական պայմանագիրը, ի նկատի ունենալով յոյների հալածանքներն ու ճնշումները:

Ռումինիայի վրայով շարունակ առաքվում է ռազմամթերք Կ. Պոլիս ուղարկելու համար: Պրեդէալ կայարանում բռնվեցին ուժանակով լի 2 արկղ, որ ուղղված էր Բուխարէստի գերմանական միսսիայի հասցէով: Բռնվել են նոյնպէս մի քանի արկղ պայթուցիկ նիւթեր, որոնք փոխադրվում էին Կ. Պոլիս բուլղարական արքայի պատկանող իրերի անուան տակ: Ռումինական իշխանութիւնները գրաւեցին այդ արկղները:

Գերմանացիք շարունակում են ռազմամթերք ուղարկել Կ. Պոլիս Ռումինիայի և Բուլղարիայի վրայով: Վերջերս Կ. Պոլսում ստացվել է 1500 ձեռքի ռումբ: Սպասվում է 60 վագոն ռազմամթերք:

ՀՌՈՄ.—Թիւրքիայից ստացվող տեղեկութիւնները իտալական հպատակներին ճնշելու մասին հասարակական կարծիքի վրա ծանր տպաւորութիւն գործեցին: «Ջիօրնալէ դ'Իտալիա» ընդգծում է, որ մինչև օրս իտալական կառավարութիւնը լիակատար համբերութիւն էր պահպանում բոլոր պրովոկացիաների հանդէպ, ձգտելով բարեկամական խորհուրդներով ստիպել Թիւրքիային պահել իւր աւելի կորէկտ, բայց այդ ճանապարհը ոչինչ չը յանգեց: Այսուհետև Իտալիայի կողմից այդօրինակ եղանակը կարող է թուլութեան նշան համարվել: Լրագիրը խորհուրդ է տալիս կառավարութեանը եռանդով պահանջել Թիւրքիայից, որպէսզի նա հրաժարվէ վտանգաւոր քայլերից:

—

(Լրագիրներից)

◆ Դարդանէլում դաշնակիցների ռազմական գործողութիւններին մասնակցում են նաև իտալական պատերազմանաւերը:

◆ Դիւանագիտական շրջաններում հաստատում են, որ դաշնակիցները փոխադարձաբար համաձայնել են յանձնելու Կ. Պոլիսը Ռուսաստանին: Դարդանէլը յայտարարվելու է միջազգային:

◆ Կ. Պոլսում հայերի հալածանքները, բանտարկութիւնները և մահապատիժները շարունակվում են: Փոքր ի շատէ հարուստ և դիրք ունեցող հայերին Բ. Դուռը աքսորում է Փոքր-Ասիայի խորքերը: Պատգամաւոր Զօհրապը աքսորված է:

◆ Պատերազմի սկզբից ռուսաց նաւատորմը Սև ծովում ոչնչացրել է 47 թիւրքական մեծ շոգենաւ և 500 առագաստանաւ:

◆ Թիւրք-իտալական յարաբերութիւնները դարձել են շատ լարված: Շուտով նրանք խզվելու են:

◆ Թիւրքաց պաշտօնական օրգանը Թիւրքիայում բնակվող օտարերկրացիների մասին յօդուած է տպել, որի մէջ ասում է, թէ այժմ առանձնապէս պարզվեց կառավարութեան դիրքի կանոնաւորութիւնը, որ հիմք դրեց օտարերկրացիների ջոկութիւնը վերացնելու կապիտուլացիները ոչնչացնելով: Պատերազմը ցոյց տուեց, որ բոլոր օտարերկրացիք, բացի գերմանացիներից, որոնք օգտվում էին լայն հիւրասիրութեամբ, կրիտիկական բոպէին երես դարձրին Թիւրքիայից: Թիւրքական համբերատարութիւնը բաղխվեց քրիստոնէութեան անհաշտ ոգուն: Նոյնիսկ պատերազմական դրութեան մէջ յոյները և հայերը օպպօզիցիա են կազմում: Կառավարութիւնը դէմ է յեղափոխական-օտարերկրացիներին Աբդիւլ-Համիդեան արիւնային պատժի ենթարկելու, սակայն առողջ էգօիզմը թելադրում է «Թիւրքիան թիւրքերի համար» լօզունգը: Յօդուածը վերջանում է մատնանշելով, որ հայերը և յոյները կարող են ապացուցանել իրանց լօյալութիւնը զօրծող բանակը մտնելով յօժարակամ:

◆ Խարբերդում հայերի ապստամբութեան տեղեկութիւնները ճշտվում են: Դիարբէքիրից մեկնած թիւրք զօրքերը քարը քարի վրա չեն թողել. գազանները սրի են քաշել բոլոր հայերին անխտիր: Շատ հայերի նրանք խաչել և առ հասարակ սոսկալի տանջանքներով մահացրել են....

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՑԻՆԵՐԻՆ

Գէորգ ծառայ Քրիստոսի և անհասանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ և Կաթողիկոս Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի. հարազատ հայկազուն որդւոց Մերոց, բնակելոց ի տերախնամ Վան քաղաքի և ի վիճակս Վասպուրականի. հոգեշնորհ վանահարց և սրբակրօն միաբանից վանօրէից հայոց, բարեկրօն քահանայից, մեծարգոյ անդամոց գաւառական երեսփոխանական, կրօնական և քաղաքական ժողովոց, բարեջան հոգաբարձութեանց եկեղեցեաց և դպրոցաց, վաստակաւոր ուսուցչաց, աշխատասէր վաճառականաց և արհեստաւորաց, քրտնաջան երկրագործաց և շինականաց, համեստափայլ տիկնանց և օրիորդաց հայոց աշխարհին Վասպուրականի, շնորհք Աստուածային, սէր և միաբանութիւն, ողջոյն քրիստոսաւանդ և օրհնութիւն հայրապետական:

Բազմաչարչար և տոկուն ժողովուրդն հայոց, ի պատճառս տարաբաղդ հանգամանաց և պայմանաց պատմական կենաց մերոց, միշտ և հանապազ ստիպեալ կայ մաքառել ընդդէմ բազմապիսի արգելանաց և անարդար հալածանաց, վասն պաշտպանութեան գոյութեան և ազգային լուսաւորութեան իւրոյ: Ցաւ ի սիրտ տեսանեմք, զի յընթացս ազգային գոյութեան մերոյ ոչ գոյ դար և ժամանակ, յորում աշխարհն հայոց և նահատակ եկեղեցին մեր, հանդերձ ժողովրդովն իւրով, ազատ մնային յաղէտից և յասպատակութեանց թշնամեաց և վայրենաբարոյ ժողովրդոց: Սակայն գոհութեամբ և մխիթարութեամբ յիշեմք աստ, զի ազգային հոգեկան կորովն հայոց մնայր հանապազ աննկուն և անյաղթ:

Արդէն իսկ գիտէք, որդեակք սիրելիք, եթէ նախնիքն մեր երանելիք որպիսի հալածանս դժնդակս, նեղութիւնս անբաւս և խոշտանգանս սոսկալիս կրէին վասն փրկութեան հայրենեաց և եկեղեցւոյ մերոյ, ի ձեռաց անիրաւ բռնաւորաց և նեղչաց ազգիս մերոյ: Եւ յայնոսին իսկ յաւուրս Եկեղեցին Հայաստանեայց և ազգն մեր տայր և յառաջ վարէր զհոգևորական և աշխարհական գործիչս անձնազոհս, որոց ոգիքն [illegible] և զօրացեալք [illegible] շնորհօք և բարոյական արժանեօք, և ինքեանք առաքինական գործովք զարդարեալք, դիմագրաւ լինէին աներկիւղ սրտիւ բիւրաւոր հալածանաց և տանջանաց թշնամեաց իւրեանց, որոց վասն ս. եկեղեցին և ժողովուրդն մեր յիշէ զնոսա օրհնութեամբ և երախտագիտութեամբ:

Յիշեցուցանեմք ձեզ, ով քաջարի զաւակունք մեր, զի ի հինգերորդ դարու, մեծաւ զօրութեամբ գոռոզացեալ բռնաւոր Յազկերտն, մինչ ջանայր ծանրութեամբ հարկաց և զինու զօրութեամբ, զօրօք և զօրականօք իւրովք ոչնչացնել խաչաւ զեկեղեցին և զժողովուրդն հայոց, առաքինի և քաջարի նախնիքն մեր, ս. Ղևոնդեանք, անձնազօհ Վարդանանք և քաջամարտիկ Վահանանք խիզախաբար ելին ընդդէմ բռնաւորաց ի պատերազմ և վարդագոյն արեամբ իւրեանց փրկեցին զազգն և զեկեղեցին ի կորստենէ:

Այսօր ևս զնոյն տեսանեմք: Պատմական թշնամիք մեր ոչ դադարին ի դաւադրութեանց և ի չարահնար մեքենայութեանց իւրեանց: Հրոսակախումբք թիւրքաց և վայրենաբարոյ քիւրդաց ասպատակեն և կործանեն զշէն գիւղօրայս հայոց, անխնայաբար կոտորեն և խողխողեն զանմեղ զաւակունս մեր, սրբապղծեն զազգային-կրօնական և զընտանեկան սրբութիւնս մեր, զամենայն ինչ սրոյ և հրոյ ճարակ առնելով: Յամենայն կողմանց Հայաստանի, ի Բաղէշ, ի Մուշ, ի Կարին և յայլ քաղաքս, ի Սասնոյ և ի Կիլիկիոյ լսեմք զաղբս և զաղաղակս անօգնական և անզէն զաւակացս. վարդագոյն արիւն որոց կրկին հոսի և խառնի ընդ աղբիւրս և ընդ գետս սգաւոր Հայաստանի:

Գոհութիւն և փառս վերառաքեմք առ Աստուած, զի դուք, որդեակք սիրելիք, անձնազոհ քաջութեամբ ձերով, շուտափոյթ օգնութեամբ քաջարի զօրաց մեծին Ռուսիոյ և քաջամարտիկ կամաւորաց մերոց, փրկեցայք յանգութ թշնամեաց, և այսօր սրտեռանդն ոգւով աշխատ լինիք վասն փրկութեան եղբարց և քերց ձերոց, որք ի յուսահատ վիճակի կան, և վասն ազատութեան ազգիս հայոց ի բռնութենէ և ի դաւաւոր կապանաց թիւրքաց:

Պատիւ և ողջոյն ձեզ և յարգանք քաջութեան ձերում, զի դուք, սիրելիք, ցուցիք աշխարհի, եթէ գիտէք անձնազոհութեամբ և համբերաշխ ազգասիրական գործակցութեամբ պաշտպանել զազգային իրաւունս և զարժանապատուութիւն ձեր:

Ուստի և զհայրենասիրական միասիրտ գործունէութիւն և զխելացի քաջագործութիւն ձեր համարելով արժանի ամենայն ջատագովութեան և քաջալերութեան, այսու հայրապետական կոնդակաւս, ի ս. Միածնաէջ տաճարիս և ի Մայր Աթոռոյս օրհնեմք զձեզ զամենեսին և մաղթեմք ի Տեառնէ պարգևել ձեզ կար և զօրութիւն, քաջառողջութիւն և յաջողութիւն յամենայն գործս ազգայինս:

Լիայոյս եմք, զի նախախնամութեամբ և օգնութեամբ մեծազօր Ռուսիոյ և դաշնակից պետութեանց իւրոյ վախճան լիցի դարաւոր տանջանաց և գերութեան հայոց: Հաւատամք զի մերձ է փրկութիւն ժողովրդեան Իմոյ և արշալոյս ազատութեան Թիւրքահայաստանի:

Ոն ուրեմն, որդեակք սիրելիք, քաջալերեցարուք և լի յուսով և համբերաշխ ոգւով գործեցէք, առ ի վերականգնել զնախնի փառս հայրենեաց մերոց:

Տէր Աստուած փրկեսցէ զձեզ յամենայն փորձութեանց և ի նեղութեանց և յորոգայթից չարանենգ թշնամեաց:

Առաքեմք առ ձեզ զմիաբան Մայր Աթոռոյս, զգերաշնորհ Սահակ արքեպիսկոպոս, որ ունի մխիթարել և սփոփել զամենեսին, որում տուաք նաև զանհրաժեշտ հրահանգս վասն գործունէութեան իւրոյ:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, և յաւէտ օրհնեալ ի մէնջ. ամէն:

ԳԷՈՐԳ Ե.
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Գրեցաւ կոնդակս հայրապետական ի 27 մայիսի 1915 ամի, ըստ տոմարիս ՌԿԴ, ի հայրապետութեան մերում Դ. ամի, յԱրքայանիստ Մայր Աթոռ ս. Էջմիածնի, ի Վաղարշապատ. Թիւ 920.

ՎԱՆԸ, ՎԱՆԵՑԻՆ ԵՒ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Վանն ազատեց վանեցին, ամբողջ հայութեան [illegible] պահել [illegible]:

[illegible] ոտքը Վանից կտրեց վանեցին, այժմ որ հայրենիքն է ընկնում, թոյլ չէ տալու, որ նորից ոտքը կոխի այնտեղ թշնամին:

Ռուս [illegible] և հայ կամաւորների [illegible] և նշանակութիւնն [illegible], բայց Վանը փրկեց [illegible]:

[illegible]

Հինգ է [illegible]

Հինգ է [illegible]

Հինգ չէ, հինգ չէ...

[illegible]

կուզէք, նպատակը՝ տէրոջը, հայը՝ Թիւրքին, վանեցին՝ թշնամուն... Վանեցին յաղթեց թշնամուն... Երեք բառ և մի խօսք, բայց ի՜նչ խօսք...

Աւելի քան 500-ամեայ երազը «ի բարին կատարվեց». միլիօնաւոր բերաններից բըղխած աւելի քան 500 տարիների աղօթող հայի մրմունջները հասան Աստուած պետականի աթոռի առաջ և լսելի եղան. աւելի քան 500 տարվայ աւազակ-ոճրագործը, որ խուժել էր տունը, գրաւել էր ու նստել և, դուրս չէր գալիս, դուրս շպրտվե՜ց. աւելի քան 500 տարիներից Վանի բերդի գլխից հային խօռ ու խոժոռ նայող կիսալուսինը տեղի տուեց վերջապէս խաչադրօշին...

Յաղթեց վանեցին թշնամուն... անզուգական փառահեղ ու չքնաղագե՜ղ ակտ. «Արդեօք գալու է մի օր ժամանակ, տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ»...

Այո, այո, Վանի ծովակի ալիքների հետ խօսող բանաստեղծ, եկաւ ժամանակը և Վանի բերդի կատարին ծածանեց հայ դրօշակը։

«Ա՜խ, հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ, ուրախ-զուարթ, ապահովված, առանց ցաւ, Տիգրանակերտ, Մուշ, Բայազէտ դէպի Վան ուղարկել են հայ զօրքերը պահապան...»։

— Արդէն հնչեց ժամը հայի ցաւի փարատման, հայի վիճակի լաւացման, թէև Տիգրանակերտն ու Մուշը հրդեհով ու ծըխով է պատած, դեռ ևս իրանք պէտք ունեն Վանի «պահապան զօրքին»...

Վասպուրականի սուտան Վանը ետ է խըլված, Լէնկ-Թեմուրի, Ալփասլանի, Ջինգիզխանի ժառանգները ստիպված եղան իրանց փասափուշը հաւաքելու ու գնալու։

Վանեցին դրանց ճամբու դրեց։ Նա հագաւ մահվան շապիկը. իր պատանքը իր ձեռքով կարեց հագաւ ու անվախ պատրաստվեց մահվան գալուն, բայց մահը վախեցաւ ու փախաւ նրանից... և վանեցոց աւազակները տնից դուրս ընկան հեռացան։

Այժմ ինչ անել. այժմ հայութեան վրա պարտք է ծանրանում, որ աշխատէ թոյլ չը տալ նորից վերադառնան, այլ ջանան փախուստի ճանապարհը շարունակել տալու թշնամուն մինչև... Թէկուզ Շամ։

Նաև. Թշնամին թէև հեռացաւ, բայց որքան ծանր գնով։ Նա իր ետև թողել է թշուառութիւն, քաղցածութիւն, հիւանդութիւն, մերկութիւն...

Ամբողջ հայութեան վրա պարտք է ծանրանում—ինձ, քեզ, նրան և բոլորին,—պէտք է օգնել ով ինչով որ կարող է։ Ամենքն էլ պէտք է օգնեն։ Ամենքն էլ կարող են օգնել։

Այսպէս պէտք է մտածի ու զգայ ողջ ազգը, ողջ հայութիւնը. այլապէս ընկած եղբօր չը տեսնողն ու չօգնողը, տեսնել ու օգնել չուզողը ինչ հայ. պարտազանց եղողը ոչ թէ հայ չէ, այլ մարդ չէ, որովհետև նամուս ու ղէյրաթ չունեցող հողաբաժինը ի՜նչ մարդ...

Հայրենիքի ազատութեան համար մղված կռիւը պէտք է ընդհանրացնել. կամաւոր-զինւորը թող իր արիւնը զոհ բերի, ինտելիգենտը՝ իր միտքն ու ամբողջ էներգիան, ամբոխն իր հացն ու սպասը, կինը՝ իր հոգին ու խնամքը, աղքատն իր կոպէկները, հարուստն՝ իր ոսկիները...

Վանն ազատեց վանեցին, հայութիւնը պէտք է պահպանի նրան... Կրկնում ենք և վերջացնում՝ հայ կամաւորների և ռուս ազատարար բանակների դերը իրանց տեղը... Հայ կրեսօսներն էլ պէտք է «ռազմադաշտ» դուրս գան, ոչ թէ, ի հարկէ, իրանց կարմիր արիւնը թափելու, այլ դեղին ոսկիները դուրս թափելու, որոնց պէտքն ու կարևորութիւնն այժմ աւելի քան երբէք անհրաժեշտ է։

Հայ-հարուստը պէտք է զոհի, սպանի... իր ոսկիները, կենդանութիւն տալու «Օսմանական ժանտախտից» մազապուրծ եղած սովալլուկներին ու ցաւատանջներին, որոնք գոնէ մնան, ապրին, որպէս «սերմացուներ», ապագայ հայաստանցիներ...

Երիտասարդ-Թիւրքերը իրանց սպառնալիքը՝ «Հայաստանը յանձնելու առանց հայերի», գործադրելու են ձեռնարկել։ Լսի՛ր, հայութի՛ւն, բայց, Վանը փրկված է սրից. այժմ ազատվածներին պէտք է փրկել սովից ու ախտերից...

Եթէ անգամ պարպել աջողեն ողջ Հայաստանը, բայց առ այժմս Վանը կայ, և ջանալ, պինդ, ոգի ի բուն ջանալ, որ նա մնայ։ Եւ մեծ յոյսով փայփայել այդ «մանանեխի հատիկը»։

Փրկութեան ու զոհողութեան այս ժամերին արթնութիւն է պէտք։

Վա՜յ, եթէ վառօդը խոնավանայ, վա՜յ եթէ հայութիւնը թերանայ և սրով թշնամին ետ դառնայ...

Արթնութի՜ւն, աշխատանք, զոհողութի՜ւն։

Ֆ. Ֆանի

ԹՈՒՐՔԻԱՆ ՆԵՐԿԱՅ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Ներկայ պատերազմում, ինչպէս յայտնի է, Թիւրքերը հարկադրված են պատերազմ վարել չորս առանձին զօրաճակատներում, հարաւ-արևելքում՝ Բոսֆորի շրջանում, հարաւ-արևմուտքում՝ Սուէզի ջրանցքի կողմից, հիւսիսում մեր կովկասեան զօրքի և նաւատորմի դէմ և վերջապէս հիւսիս-արևմուտքում՝ Դարդանէլում։

Մենք արդէն ասել ենք, որ 1912 թ. բալկանեան դաշնակցութեան հետ ունեցած պատերազմում մի շարք պարտութիւններից յետոյ՝ Թիւրքիայի ցամաքային ուժերը կրեցին խոշոր կորուստներ թէ մարդկանցով և թէ նիւթով։ Եթէ ուշադրութեան առնենք, որ յիշեալ պատերազմում թիւրք զօրքի վերակազմութիւնը՝ սկսած դեռ 1907 թւից գեներալ շտաբի պետ Իզզէթ-փաշայի նախաձեռնութեամբ, իսկ յետոյ լրացված Մահմուդ-Շէվքէթ-փաշայի ձեռքով չաւարտվեց, ապա պարզ կը լինի մեզ համար, թէ ինչու թիւրք զօրքը չը կարողացաւ պատրաստ լինել երկու տարի յետոյ նոր, աւելի լուրջ պատերազմի, որի վախճանից կարող է կախված լինել Թիւրքիայի վիճակը։

Սակայն գերմանացիք, որոնք իր ժամանակին պահանջեցին յիշեալ բարենորոգումը, գնահատելով Թիւրքիայի՝ իբրև իրանց դաշնակցի շատ կարևոր նշանակութիւնը՝ իրանց նախագծած պատերազմի մէջ, գործադրեցին բոլոր հնարաւոր ջանքերը, որպէսզի պատրաստեն նրա ցամաքային ուժերը նոր փորձութեան։

Դեռ մինչև 1912 թ. պատերազմի վերջանալը գերմանացիք մեծ գումարներ հայթայթեցին Թիւրքիային, և երբ Թիւրքերը գտնվում էին Զաթալջայում, տուին նրանց մեծ թւով թնդանօթներ և ամեն տեսակ ռազմամթերք։

Թիւրքերի կորուստների չափը այդ պատերազմում, ըստ երևոյթին, չէին նախատեսում նոյն իսկ գերմանացիք, և այդ հանգամանքն այն երկիւղի հետ միասին, թէ մի գուցէ Ռուսաստանը հանդէս գայ ակտիվ կերպով, ստիպեցին նրանց չը խնայել միջոցներ իրանց ապագայ դաշնակիցներին պաշտպանելու համար։ Այդ ժամանակից Գերմանիայի զինւորական կապը Թիւրքիայի հետ արդէն չը դադարեց, և զինւորական մինիստրութեան գլուխ կանգնած Էնվէր-փաշայի բարեհաճ աջակցութեամբ գերմանական շտաբը իր ձեռքն առաւ վերջնականապէս Թիւրքիայի պաշտպանութեան կազմակերպութեան գործը։ Նրա աջակցութեամբ մշակվեց ապագայ պատերազմական գործողութիւնների ծրագիրը, քայքայված զօրամասերը կարգի բերվեցին, կորցրած զէնքը լրացվեց, զինապահեստները լցվեցին առատութեամբ ռազմամթերքով։ Ժամանակի սղութեան պատճառով անկարելի էր կանոնաւորել ու կատարելագործել ճանապարհների հաղորդակցութիւնը, ինչպէս նաև ուժեղացնել Թիւրքիայի ծովային ուժերը։ Ի միջի այլոց մտադրութիւն կար Մարմարա ծովը բերել Միջերկրական ծովի գերմանական նաւատորմը և մի բան էլ վերցնել աւստրիացիներից։ Բայց այդ աջողվեց նուազ չափով. Դարդանէլ մտան միայն «Գեբէնը» և «Բրէսլաուն»։ Հարկ եղաւ լրացնել պակասող ուժերը սուզանաւեր ուղարկելով բաժան-բաժան արած՝ չէզոք պետութիւնների երկաթուղիներով։ Բացի դրանից, Թիւրքիա փոխադրվեցին որոշ քանակութեամբ ծանր թնդանօթներ՝ նեղուցների մի քանի նաւահանգիստներում դնելու համար։ Կ. Պոլսի շրջակայքում Կրուպպի ֆիրման շտապով գործարան բացեց ռազմամթերք պատրաստելու և թնդանօթները նորոգելու համար։ Բացի այդ՝ զանազան ժամանակ թիւրքաց զօրքի համար ուղարկվեցին մօտ 2000 օֆիցեր և մեծ թւով ունտէր օֆիցեր զանազան մասնակցութեան։ Չը նայած փութկոտութեան, բոլոր այդ ձեռնարկութիւնները կարելի չեղաւ վերջացնել մինչև արևմուտքում յայտարարված պատերազմը, որի պատճառով Թիւրքերը մի փոքր ուշացան։

Թիւրք-գերմանական ծրագրի համաձայն մտադրութիւն կար յամառութեամբ պաշտպանվելով Կ. Պոլսի և Զմիւռնիայի շրջաններում՝ յարձակման դիմել երկու ուղղութեամբ. հարաւ-արևմուտքում յոյս ունէին պաշարել Սուէզի ջրանցքը և ապստամբութիւն յարուցել Եգիպտոսում. իսկ մեր կողմից, կենտրոնացնելով մեծաթիւ ուժեր և խախտելով Պարսկաստանի չէզոքութիւնը, ներս խուժել Անդրկովկասի սահմաններ լայն ռազմաճակատով, ապստամբութիւն առաջ բերել մահմեդականների մէջ և առաջանալ դէպի Թիֆլիս, Երևան և նոյնիսկ Բագու։ Հարաւային շրջանում Սուէզի ջրանցքի կողմից Թիւրքերը ցիրուցան արվեցին խոշոր կորուստներով և ներկայումս, ըստ լուրերի, նրանք բոլորովին հրաժարվել են այստեղ ակտիվ գործողութիւններից. այժմ Դամասկոսի զօրաբանակը դիմում է մաս-մաս դէպի հիւսիս, Զմիւռնիայի և Դարդանէլի ուղղութեամբ, ուր տեղի էին ունենում Թիւրքիայի համար ամենավտանգաւոր գործողութիւնները։ Միևնոյն ժամանակ աջող գործողութիւնները Շատ-էլ-Արաբի շրջանում ներս քաշեցին Բաղդադի շրջանի զօրքերի մի մասին։

Ինչ վերաբերում է մեր զօրքերի ճակատին, այստեղ Էրզրումի զօրքի ծանր պարտութիւնից յետոյ (IX, X և XI գործող զօրաբանակներ), Թիւրքերը ստիպված եղան ոչ միայն հրաժարվել իրանց գրաւիչ արկածախնդրութիւնից, այլ և աստիճանաբար ետ քաշվել դէպի իրանց նախկին կէտերը։ Աւելի երկար ժամանակ նրանք դիմադրեցին Ծովամերձ և Արդուինի շրջաններում և Արևմտեան Պարսկաստանում (Ուրմիայի շրջան) շնորհիւ տեղական պայմանների և մի քանի այլ պատճառների։

Մեր զօրաճակատում Թիւրքերի զօրքը բաղկացած էր Երզնկայի շրջանի 7 դիվիզիաներից, որոնք տարածված են Էրզրումի, Երզնկայի և Վանի վիլայէթներում (76 բատալիոն), 1-ին կարգի ըէդիֆի 8 դիվիզիաներից (72 բատալիոն), բացի դրանից բաւական մեծ թւով անկանոն զօրքերից, գըլխաւորապէս համիդիէներից (քիւրդեր) և մասամբ մուստահֆըզից (երկրապահ զինւորներ)։ Դրան կարելի է աւելացնել Կ. Պոլսի 1-ին զօրաբանակի զօրամասերը, որոնք ըստ լուրերի գործում են Ծովամերձ շրջանում և Բաղդադի շրջանի զօրքերի մի մասը Մօսուլից և Կերկուկից, այսինքն 35—36-դ դիվիզիաներ (24 բատալիօն)։ 1877—1878 թ. թ. պատերազմում Բաղդադի զօրքերը գործում էին Էրզրումի ուղղութեամբ։ Իսկ ներկայ պատերազմի մէջ յիշեալ դիվիզիաները, մի քանի ըէդիֆի գնդերի աջակցութեամբ ուղարկվեցին Մօսուլից Ուրմիա։

Անցեալ տարվայ ձմեռը Թիւրքերը, օգտվելով իրանց թւական գերազանցութեամբ, ներս խուժեցին մեր սահմանները, ձեռք ձգեցին Արդուինը, Արդանուշը, Արդահանը և գրաւեցին Ատրպատականի արևմտեան մասը։ Սակայն նրանց ուժերի վերոյիշեալ պարտութիւններից յետոյ նրանք ստիպված եղան ետ քաշվել, որից յետոյ գործողութեան նախաձեռնութիւնը մեզ անցաւ. Թիւրքերի բոլոր յարձակողական փորձերը վերջանում են անաջողութեամբ։ Ծովամերձ և Արդուինի շրջաններում մենք այժմ գրաւած ունենք շահաւէտ դիրքեր. առաջացել ենք Օլթիի ուղղութեամբ. Սարըղամըշի շրջանում գրաւել ենք Ստորին Բասէնի հովիտը, իսկ աւելի հարաւ՝ Ալաշկերտի ուղղութեամբ պաշտպանում ենք Կարա-Դէրբէնտ շատ կարևոր կիրճը։ Անհամեմատ առաջացել է մեր ձախ զօրաթևը Ուրմիայի երկրում աջող գործողութիւններ ունենալուց յետոյ։ Այստեղ մենք գրաւել ենք Վանի սանջակի խոշոր մասը Վան քաղաքի հետ միասին։ Ընդ որին մեր զօրքերը գործում են Վանի լճի հիւսիս-արևմտեան վերջաւորութեան՝ Ախլաթի մօտ, իսկ հարաւ-արևմուտքում՝ Սուրբի մօտ։ Իսկ Թիւրքերի փորձերը Մուրադ-չայի (Եփրատ) կողմից՝ Մանազկերտի շրջանում մենք աջողութեամբ վանում ենք։

Պատերազմի զարգացմամբ անհամեմատ խոշոր նշանակութիւն, ինչպէս և պէտք էր սպասել, սկսեցին ձեռք բերել նեղուցները, բայց չը նայած մեր դէմ հանված մեծաքանակ ուժերին, նրանք հազիւ թէ կարող լինեն ետ տանել այստեղից շատ բատալիօններ այդ նեղուցների պաշտպանութեան համար։ Սև ծովի վրայով նրանք չեն կարող զօրք անց կացնել մեր նաւատորմի խիզախ գործողութիւնների պատճառով, իսկ ցամաքային ճանապարհով շատ ժամանակ է պահանջւում։ Այդպիսով Թիւրքերի գործողութիւնները մեր սահմանում և նրանց բոլոր յարձակողական փորձերը, որոնք նկատվում են մայիսից, կարող են բացատրվել արդէն ոչ թէ նախնական ծրագիրը իրագործելու մտադրութեամբ, այլ ըստ հնարաւորութեան մեր ուժերին դիմադրելու ցանկութեամբ։ Ա. Բ.

(«Нов. Вр.»)

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական՝ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Շավէլի շրջանում հակառակորդը կենտրոնանում է Միտավա-Շաւէլի խըճուղուց դէպի արևմուտք ընկած ճանապարհների վրա։

Անդրնեմանեան շրջանում յուլիսի 8-ին յամառ կռիւներ էին Եսեա գետի վրա՝ Կօվնայից դէպի հարաւ-արևմուտք։

Նարեվի զօրաճակատում յամառ կռիւներ են Ռօժանի դիրքի մօտ, Մրօչկի և Կովկի գիւղերից ոչ հեռու։ Հակայարձակումներից մինի ժամանակ կօզակները խիզախաբար սրի քաշեցին գերմանական մի վաշտ։

Վիսլա գետի ձախ ափում մեր զօրքերը գրաւում են Բլօնէ-Նադարժին զօրաճակատը և Իվանգօրոդի առաջակայ դիրքերը։

Վիսլայի և Բուգի միջև յուլիսի 8-ին ճակատամարտը աւելի սաստկացաւ։ Թշնամին իր ուժերը կենտրոնացնում է գլխաւորապէս Բալժիցէի, Տրաֆնիկի, Վիսլավիցէի և Գրուբէշովի ուղղութեամբ։

Մի քանի գիւղեր ու դիրքեր ձեռքից ձեռք են անցնում։

Բուգի վրա յամառ կռիւներ են Կրիլովի մօտից մինչև Դօբրոտվոր։ Սօկալից վերև լայն ռազմաճակատով մենք վանեցինք թշնամուն Բուգի աջ ափից և ձեռք ձգեցինք Պոտուրժիցէ գիւղում մօտ 1500 գերի։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ՊԱՐԻԶ. — Պաշտօնական հաղորդագրութիւններ.

Արտուայում գիշերը թնդանօթաձգութիւն էր Սուշէի և Նէվիլի շրջակայքում։ Սուասօնը ռմբակոծվում էր գիշերվայ ընթացքում։ Ապրէմօնի անտառում թշնամին յարձակումներ էր գործում մեր դիրքերի վրա Տէտ-ա-Վաշի և Վօֆէրի մօտ, բայց վանվեց։ Երէկ Վօգէզներում գիշերով ու ցերեկով տեղի ունեցան ուժեղ ռազմական գործողութիւններ։ Ֆեխտ հովտում մենք գրաւեցինք գերմանական խրամատների մի մասը։

Մեր օդագնացները, թւով 31 հոգի, ռումբեր նետեցին Կոնֆլան-Ժարնիզի կայարանի վրա։ Ռումբերից մինն ընկաւ շոգեմեքենաների դէպօյի վրա։ Թշնամու 3 օդագնաց փախուստի դիմեցին մեր աէրօպլաններից։ Մեր օդագնացները երէկ նորից ռմբակոծեցին Կոլմարի կայարանը։

Արտուայում թնդանօթաձգութիւնը շարունակվում է։ Սուշէի շրջակայքում կռիւ է ականներով։ Արգօնեան անտառի արևելեան մասում թշնամուն աջողվեց ամրանալ մի խրամատում։ Մասսի և Մօզէլի միջև կատաղի թնդանօթաձգութիւն է։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Կ. ՊՈԼՍԻ ԳՐԱՒՈՒՄԸ ԹԻՒՐՔԵՐԻՑ

(1453 թ. մայիսի 29-ին)

XV դարի երկրորդ կիսին՝ բիւզանդական մեծ պետութիւնը, յոգնած՝ իր աններդաշնակ քաղաքականութիւնից ու դաւանաբանական անմիտ վէճերից, կամաց-կամաց դէպի իր անդառնալի անկումն է դիմում։

Ժամանակի անողորմ ձեռքերը կազմալուծել էին այդ վիթխարի կայսրութեան կազմը։ Ժողովուրդը, մատնված վերին աստիճանի ծուլութեան ու ձրիակերութեան, կորցրել էր իր հոգեկան ու ֆիզիքական բոլոր ընդունակութիւններն ու յատկութիւնները։ Կայսերական հեռաւոր նահանգներում գրեթէ անարխիա էր տիրապետում։ Կաշառակեր պաշտօնեաները տզրուկի նման ծծում էին՝ առանց այն էլ սպառված պետական շահի աղբիւրները։ Անփութութիւնը ծայրայեղութեան էր հասել մայրաքաղաքում, այնպէս որ՝ նոյնիսկ Կ. Պոլսում կայսրների աչքի առջեն [illegible] ինքնավար գաղութ ունէին։ Միով բանիւ՝ բիւզանդական պետութիւնն այլ ևս նախկինը չէր։ Անցել էին Մեծն Յուստինիանոսի ու Լևոնի բաղդաւոր օրերը։ Բիւզանդիան խորապէս երազում էր իր նախկին փառքը, որի վերակենդանութիւնն այլ ևս ֆանտաստիկ երևոյթ էր թւում։

Առաջ էին եկել նորանոր դըրացի պետութիւններ, որոնք շարունակ աչալուրջ կերպով հետևում էին Բիւզանդիայի ապիկար քաղաքականութեան և պարբերաբար անդամահատում էին նրա ծայրագոյն նահանգները և ենթարկում իրանց իշխանութեանը։

Դրացի թշնամիներից ամենազօրեղը օսմանցիք էին, որոնք արևելեան ու արևմտեան կողմից շրջափակելով բիւզանդական պետութիւնը՝ սպառնում էին մօտ ապագայում գրաւել Բիւզանդիան և, վերջ դնելով այդ պետութեան գոյութեան, տարածել իրանց իշխանութիւնը և Կ. Պոլիսը դարձնել Ասիական ու Եւրոպական Թիւրքիայի մայրաքաղաքը։

Մահմեդականները արդէն վաղուց իրանց ուշադրութիւնը լարել էին Բիւզանդիոնի վրա. սակայն սկիզբներում, երբ դեռ կենդանութիւն կար պետութեան մէջ, չը կարողացան գրաւել։ Արաբացիք մի քանի անգամ մեծամեծ ուժերով պաշարեցին Բիւզանդիոնը ծովի և ցամաքի կողմից, բայց շնորհիւ Լևոն Իսաւրացու նման հանճարեղ կայսրի՝ ձեռնունայն ետ դարձան։ Իսկ այժմ, երբ պետութիւնն ինքն ըստ ինքեան կազմալուծվելու վրա էր, բնականաբար նորից պիտի հարուածվէր մահմեդականներից, որոնք թարմ ուժերով, հսկայական քայլերով էին առաջանում և անպայման մի օր բազմելու էին Կոնստանտինեան Մեծի գահի վրա։

Օսմանցիք սելջուկ Թիւրքերի մի ճիւղն են կազմում։ Սրանք դուրս գալով Միջին Ասիայից 1206 թւին՝ խառն ի խուռն հրոսակախմբերով դիմում են դէպի Արևմուտք։ Բաւական ժամանակ մնալով Հայաստանի հիւսիս-արևմտեան կողմերում, գնում են Փոքր-Ասիայի խորքերը և Իկոնիայի սելջուկների գերիշխանութիւնը ճանաչելով, բնակվում են այդ կողմերում։

Շնորհիւ իրանց բնական ընդունակութիւնների, Թիւրքերը կարճ ժամանակամիջոցում կարողանում են թօթափել իրանց ցեղակից սելջուկների լուծը և գրաւում են բիւզանդական մի քանի քաղաքներ, որոնցից Բրուսան դարձնում են իրանց մայրաքաղաքը։

Թիւրքերը զօրանալով Փոքր-Ասիայում, սուլթան Մուրադ II-ի ժամանակ, անցնում են Դարդանէլը և յարձակւում գործում Բալկանեան թերակղզու վրա բնակվող մանրմունր իշխանութիւնների դէմ և, յաղթելով ու իրանց ենթարկելով, Ադրիանուպօլիսը դարձնում են իրանց մայրաքաղաքը։ Այնուհետև Բրուսան կենտրոնական քաղաք էր կազմում Ասիայում եղած կալուածների։

Սուլթան Մուրադ կարողացաւ ճարպկօրէն օգտվել այն երկպառակութիւններից, որ այդ ժամանակ տիրապետում էր Բալկանեան թերակղզու և սահմանակից երկիրների մէջ։ Նա սիստեմատիկաբար կոտորեց այդ ցեղերին և նոյն իսկ Կոսովայի ահաւոր ճակատամարտից յետոյ՝ արշաւեց և կոտորեց ունգարներին ու լեհերին, որոնք, զգալով մօտալուտ վտանգը, միահամուռ ուժերով դուրս էին եկել Թիւրքերի դէմ։

Մինչ մի այսպիսի ահաւոր վտանգ էր կանգնած Կ. Պոլսի գլխին, բնակիչները պարապում էին օրթոդոքս ու լատին խաչատակ վէճերով։ Բնականաբար բիւզանդացիների այդ արգահատելի դրութիւնն անխուսափելիօրէն տալու էր իր ամենադառն հետևանքները։

Սուլթան Մուրադը կաթուածահար եղաւ Ադրիանուպօլսում։ Երեք օրից յետոյ՝ լուր հասաւ Մագնեզիա քաղաքը՝ Մահմէդ որդուն, որը իսկոյն ձի նստեց և գոչեց՝ «ով որ ինձ սիրում է, թող ինձ հետևի»։ Սուսերամերկ զօրքի հսկայական բազմութեամբ դիմում է Գալլիպօլի թերակղզին, որտեղից սուրհանդակ է ուղարկում Ադրիանուպօլիս իր գալն իմացնելու համար։ Խալիլ և Իսհակ եպարքոսները, շրջապատված պալատական այլ և այլ մինիստրներով, դիմում են ընդառաջելու Մահմէդին և հարկ եղած պատիւներով առաջնորդելու սուլթանական պալատը։

Առաջին հանդիպման, երկուստեք ևս իջնում են ձիերից. դիմաւորողները յայտնում են իրանց խորին ցաւակցութիւնն արժանաւոր հօր՝ սուլթան Մուրադի մահվան առիթով և, առաջնորդելով նորապսակ սուլթանին դէպի պալատը, ամեն տեսակ յարգանքների հաւաստիացումները չեն զլանում։

Հետևեալ օրը նորընտիր սուլթանն ընդունում է հպատակ իշխանութիւնների՝ ի միջի այլոց և Կոնստանտին կայսրի դեսպաններ, որոնք եկել էին իրանց տէրերի կողմից շնորհաւորելու նորընտիր սուլթանի գահակալութիւնը։ Մահմէդը խոստանում է խաղաղութեան մէջ պահել բոլոր հպատակներին, և այսպիսով դեսպանները մեկնում են իրանց նախկին տեղերը։

Այս միջոցին ապստամբվեց Կարամանի Իբրահիմ իշխանը. սակայն ապստամբութիւնը այս անգամ չունեցաւ իր սովորական հետևանքները, ինչպէս տեղի էին ունենում ուրիշ անգամներ։ Մահմէդի խորամանկ քաղաքականութիւնը, որ երբէք չէր կարող հանդուրժել մի այդպիսի չնչին իշխանի ապստամբութեան, այս անգամ հանդուրժեց այս բանին՝ իր ապագայ մեծամեծ ծրագիրները դիւրութեամբ ի կատար ածելու համար։

Ի՞նչ դրութիւն էր ներկայացնում այդ ժամանակ Կ. Պոլիսը. պարզապէս մի դժոխք։ Լատին և օրթոդոքս եկեղեցիների միութեան հարցը ինչպէս անցեալում, նոյնպէս և այժմ ալեկոծում էր ֆանատիկոս բնակչութեան ծալքերը և երկպառակութեան տեղի տալիս։ Այս դրութիւնը, ի հարկէ, նպաստաւոր էր Ֆաթիհին, երբ ձեռնարկեց շինելու Բոսֆորի ափին այն մեծ ամրոցը, որին շինելու համար ձգտել էին իր նախնիքը։

Մահմէդ Ֆաթիհն իր իշխանութեան տակ գտնված բոլոր երկիրները հրովարտակներ էր գրում, որպէսզի հազար որմնադիրներ ու հիւսներ գան, յիշեալ ամրոցի շինութեան համար, միաժամանակ կիր և փայտի պատրաստութիւններ տեսնելով։

Կոնստանտին XI Պալէօլոգը կայսրը բոլոր քաղաքացիներով մէկտեղ սարսափեց՝ նոր բերդի շինութեան լուրը առնելուն պէս։ Դեսպաններ ուղարկվեցին կայսրի կողմից խնդրելու ամրոցի շինութեան դադարումն՝ բաւականանալով միմիայն այն հարկերով, որ տալիս էին բիւզանդացիք օսմանցիներին։

Խիստ վայրացաւ Մահմէդը կայսեր դեսպանների վրա և ասաց. «Իմ հայր Մուրադը վաղուց հետէ ցանկանում էր մի հզօր ամրոց կանգնեցնելու Բոսֆորի ափին, որպէսզի մերայինները համարձակօրէն ասիական ափից անցնեն եւրոպական ափը և ընդհակառակն։ Ինչ որ նա չը կարողացաւ գլուխ բերել, ես պէտք է կատարեմ։ Եւ մի՞թէ իրաւունք չունեմ իմ սեփական երկրումս այնքան բերդեր շինել, որքան ես ցանկանում եմ։ Գնացէք, ասացէք ձեր տէրոջը, որ չը կարծէ ինձ իմ նախնեաց նման. ինչ որ նրանց համար անկարելի էր, ինձ համար հեշտ է. և ինչ որ նրանք չը կամեցան անել, ես ազատաբար կամենում եմ. և եթէ միւս անգամ մի օրեէ մէկը իբրև դեսպան ուղարկէ ինձ մօտ, թող հաստատ հաւատայ, որ կենդանի-կենդանի մորթազերծ կանեմ նրանց»։

Դեսպանները տխուր-տրտում վերադարձան կայսեր մօտ և ամեն ինչ պատմեցին մանրամասնօրէն։ Կոնստանտին կայսրը, որ իսկապէս մի անվեհեր անձնաւորութիւն էր, սկսեց քաղաքն ամրացնել և հարկ եղած կենսական մթերքներն ամբարել։ Սակայն այդ չնչին պատրաստութիւններն անզօր եղան կասեցնելու օսմանցիների առաջխաղացումը։

Երեք ամսվայ ընթացքում արդէն բերդը շինվեց, և Մահմէդը դարձաւ Ադրիանուպօ-

ԾՈՎԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ԼՈՆԴՈՆ.—Լլօյդին տեղեկացնում են Պիտերգէդից, որ «Գեներալ Ռադեցկի» շոգենաւը, որ կանչված էր Ռիգա, ջրասուզվել է գերմանական սուզանաւից Շոտլանդեան կղզիներից 60 վերստ հեռաւորութեան վրա: 22 նաւաստիներն ազատվել են:

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Մինիստրների խորհուրդը հաւանութիւն տուեց ֆինանսների մինիստրի առաջադրութեանը՝ աւելացնելու լուցկիի ակցիզը: Հատավաճառում մի արկղիկ լուցկին, որ պարունակելու է 60-ից ոչ պակաս և 75-ից ոչ աւել, արժենալու է 2 կոպէկից ոչ աւելի:

Մինիստրների խորհուրդը յատկացրեց մի միլիօն ռուբլի Պետրօգրադի քաղ. վարչութեանը հիւանդ ու վիրաւոր զինուորներին խնամելու համար. Կարմիր խաչին՝ 6.558,000 ռուբլի՝ իր հաստատութիւնների պահպանման ու գոյք ձեռք բերելու համար:

«Օրէնքների Ժողովածուի» մէջ տպված է Բարձրագոյնս հաստատված մինիստրների խորհրդի որոշումը՝ պահելու զօրքերի մէջ 1914, 1915, 1916 թ. թ. զինուորակոչութեան ժամանակ զէնքի կանչվածներին:

ԼՈՆԴՈՆ. — Գումարայատկացման բիլլն ընդունվեց պալատում միաձայն:

ՀՌՈՄ.—Բացվեց 1100 միլիօնի ստորագրութիւն ազգային փոխառութեան համար:

ՓԱՐԻԶ.—Բէլգիայի անկախութեան տարեդարձի առիթով Ֆրանսիայի և Անգլիայի բոլոր մեծ քաղաքներում կազմակերպվեցին ցոյցեր Բէլգիայի պատուին: Լրագիրները յօդուածներ են նուիրում բէլգիական ազգին, որ ներկայումս զոհում է իր երկիրը, որպէս զի վերադառնայ այնտեղ աւելի ազատ ու փառքով պսակված:

ԼՈՆԴՈՆ. — Ռէյտէրի գործակալութեանը հեռագրում են Վաշինգտոնից. «Միացեալ Պետութիւնների կառավարութիւնը վճռեց իրազեկ անել Գերմանիային, որ եթէ յետագայում գերմանական սուզանաւերի զոհեր դառնան Ամերիկայի քաղաքացիք, այն դէպքում Ամերիկան այդօրինակ դէպքերը կը նկատէ իբրև անբարեկամական ակտեր: Նոտայի մէջ ասված է, որ Գերմանիան պէտք է կարգադրէ իր սուզանաւերին պահպանել միջազգային իրաւունքը»:

Համայնքների պալատում Ասկվիտը կարդաց Լլօյդ Ջօրջից և Ռէնսիմէնից ստացված այն հեռագիրը, որ յայտնում է, թէ հանքային բանւորների ժողովում վճռվեց խորհուրդ տալ բանւորներին աշխատել կրկնապատիկ եռանդով. բանւորների և հանքատէրերի միջև ծագած թիւրիմացութիւնները հարթված են:

ՍՏՕԿՀՈԼՄ. — Գերմանիան համաձայնեց շվէդական Կարմիր Խաչի մշակած կանոններով փոխանակել ռուս և գերմանացի ինվալիդներին, որոնց փոխադրութիւնը կը սկսվի յուլիսի վերջերին:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ ԵՒ ԹԱՓՕՐՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

9 յուլիսի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Երէկ, յուլիսի 8-ին, սինոդի որոշմամբ կայացաւ ժողովրդական մաղթանք մեր քաջարի զօրքին յաղթութիւն պարգևելու համար:

Մայրաքաղաքի բոլոր եկեղեցիներին դուրս եկան եկեղեցական թափօրներ, որոնք մաղթանք կատարեցին Վասիլևսկի կղզու վրա և Գաւանսկի դաշտում և վերադարձան: Թափօրների ժամանակ ժողովրդին բաժանվում էր սինոդի շրջաբերականը:

ՑԱՐՍԿՕԷ ՍԵԼՕ.—Կայացաւ հանդիսաւոր համաժողովրդական մաղթանք ռուս և դաշնակից զօրքին յաղթութիւն տալու համար: Բոլոր եկեղեցիներից ժողովուրդը եկեղեցական թափօրով դիմեց Ֆէօդորովսկի տաճարի առաջի հրապարակը: Մաղթանքին ներկայ էին Թագաւոր Կայսրը, Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորօվնան, Գահաժառանգը, Օգոստափառ Դուստրները, Մեծ Իշխանուհիներ Մարիա Պաւլօվնան և Վիկտորիա Ֆէօդորօվնան:

ՄՕՍԿՎԱ.—Լօբնի հրապարակի վրա, ուր եկան թափօրներ բոլոր եկեղեցիներից և վանքերից, միտրոպոլիտ Մակարին կատարեց հանդիսաւոր մաղթանք յաղթութիւն պարգևելու համար: Մաղթանքներին ներկայ էին Մեծ Իշխանուհի Ելիզավէտա Ֆէօդորօվնան, Նահանգապետ Իշխ. Իւսուպօվը, սինոդի օբէր-պրոկուրոր Սամարինը և այլն: Մաղթանքի առիթով բանկերը, հաստատութիւնները և գործարանները փակ էին:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

◆ Ռուսաց նաւագնացութեան ընկերութիւնը Յապոնիայում պատուիրել է 8 նոր տեսակի շոգենաւ՝ Ղրիմի և Կովկասի միջև երթևեկելու համար:

◆ Շվէյցարական լրագիրների տեղեկութիւնների համաձայն, Կալէում կայանալու է դաշնակիցների կոնֆերենցիա, որ քննելու է Կիտչեների ծրագիրը բոլոր ռազմական գործողութիւնները ի մի համաձայնեցնելու մասին:

◆ Ռումինիան վերջնականապէս որոշել է իր դիրքը. նա միանում է քառեակ համաձայնութեան:

◆ Ամերիկեան նաւատորմին հրամայված է մեկնել Բրինդիզի:

◆ Գերմանական օրաթերթերը ներկայումս շատ սառել են Բոլգարիայից: Նրանց կարծիքով՝ Բոլգարիան արդէն իր դերը խաղաց: Նրա չէզոքութիւնը այլևս լուրջ նշանակութիւն չունի և ոչ մի զոհաբերութեան արժանի չէ Գերմանիայի կողմից: Բոլգարիայի հարցերով չէ զբաղվում նաև Թիւրքաց մամուլը:

◆ «Н. В.»-ի ասելով, աւստրիական նաւատորմի մէջ ծագած անկարգութիւնների լուրերը ճշտվում են: Նոյնիսկ եղել են զինված ընդհարումներ:

◆ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբից Մոսկվա վերադարձած պատգամաւորութիւնը (Չէլնոկով և Նովիկով) ի միջի այլոց յայտնել են, որ Մեծ Իշխանը խնդրեց հերքել Նրա հիւանդութեան մասին տարածված լուրերը: Մեծ Իշխանը բոլորովին առողջ է և առոյգ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՒՏԱԿՑԵՆՔ ՕՐՎԱՑ ԼՐՋՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի յարութեան կամ մահվան կռիւը վերջին փուլի մէջն է: Եթէ կարողանանք անհրաժեշտ դարման կրակի և արեան մէջ գտնվող մեր քաջամարտիկ անձնազոհ կամաւորներին մատակարարել, անշուշտ կը տանենք յաղթանակը: Անշուշտ ենք ասում, որովհետև մեր հերոս կամաւորների թիկունքը այժմ հզօր Ռուս Արծիւն է, իսկ ուղեցոյցը՝ շարան-շարան շատ սև ու կրակ տասնեակ տարիներ բռնակալից յօշոտված՝ մայր Հայաստանի զաւակները: Աշխարհում սփռված հայ ժողովրդի բուրաւէտ, կենսունակ տարրն էլ արդէն, զէնքը ձեռին, նետված անհաւասար կռւի մէջ, շանթահար է անում թշնամուն և նրա ժանիքներից կորզում սրբազան Հայաստանի մասունքը: Հայ շինականը, հայ արհեստաւորը, հայ գործակատարն ու քրտնաջան ուսուցիչը ոչ միայն իրանց կեանքով են մարտնչում թշնամու հետ, այլ և ահագին սիրայօժար տուրք են տուել մինչև օրս էլ իրանց վաստակից: Սրանք այսօր էլ բաժանում են իրանց բերանի պատառը հայ կամաւորների հետ: Սակայն ինչ է տուել հայ բուրժուան, հայ կապիտալիստը, հայ արդիւնաբերողը: Հարցը դնում ենք շեշտակի և պահանջում յանուն հայրենիքի ազատութեան անյապաղ պատասխան: Մենք ասում ենք՝ ամօ՛թ հայ հարստին: Ամօ՛թ այն հային, որի իւրաքանչիւր օրվայ վաստակը առ նուազն օրական հարիւրներ ու հազարներ է, իսկ այդ օրական եկամուտից գոնէ հարիւրը չէ բերում ինքնայօժար՝ հայրենիքի սուրբ սեղանին:

Հայկական Բիւրոյի Թիֆլիսի Կոմիտէն քանի ժամանակ է, որ կազմված է, բայց դեռ Թիֆլիսի բօրսան, Թիֆլիսի հայ բանկերը, Թիֆլիսի հայ կլուբները, Թիֆլիսի հռչակաւոր կապիտալիստները, արդիւնաբերողները չեն բերել իրանց ամսական տուրքերը: Այլևս սպասելը՝ մահացու հարւած տալ կը նշանակէ սրբազան պատերազմին:

Այսօր երբ հայ մարտիկներն արդէն յաղթութիւններ են տանում ռուս բանակի հետ միատեղ, երբ ափ-աշխարհ ապացուցվեց սրանց՝ ռուս գահոյքին և ընդհանուր հայրենիք Մեծ Ռուսաստանին ամենահարազատ և ամենապատուաւոր ու պարտաճանաչ զաւակ լինելը, խօսքներն ինչ է հայ հարուստների, որ չեն բանում իրանց քսակները:

Առաջարկում ենք հայ բանկերին ինքնայօժար դնել իրանց վրա ամսական որոշ տուրք իրանց հիմնարկութեան ամսական ընդհանուր օպերացիայից՝ սկսած ներկայ տարվայ յունվարից: Նոյնը պէտք է անէ Թիֆլիսի բօրսան, բարեխղճաբար. դնելով պատերազմական տուրք բոլոր հայ վաճառականների վրա, որոշ տոկոս նրանց ամսական օպերացիայից:

Վերջապէս ժամանակ է, որ մեր բանկերը և Թիֆլիսի բօրսան չը յապաղեն ազգի հրամայական այս պահանջը կատար ածելու: Զի որ Թիֆլիսի օրինակին կը հետևեն Բագուն, Մոսկվան, Նախիջևանը, Պետրօգրադը և այլն, և այլն:

Տ. Նազարեան

ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ԴԵՐԸ ՆԵՐԿԱՑ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Վերջին ամիսներս յաճախակի կարդում ենք լրագիրներում, թէ ինչպիսի սրտաշարժ դէպքեր են պատահում հայ պատանիների մէջ, որպիսի ազնիւ և բուռն ոգևորութեամբ նրանք ցանկանում են օգնել իրանց մեծ եղբայրներին. մենք կարդում ենք, թէ ինչպէս միջնակարգ դպրոցների աշակերտներից ու աշակերտուհիներից ոմանք ամեն կերպ ձգտում են պատերազմի դաշտը գնալու և մասնակից լինելու հայրենիքի ազատագրման սրբազան գործին: Կարդացել է, անշուշտ, ընթերցողը, թէ ինչպէս Երևանի օրիորդաց գիմնազիայի V դասատան մի աշակերտուհի փախել է տնից և ցանկացել է կռւողներին միանալ. թէ ինչպէս Կարսի գիմնազիայի մի երկու աշակերտուհի տղամարդու շորեր հագած ներկայացել են՝ կամաւոր գրվելու համար. թէ ինչպէս Գէորգեան ճեմարանի բարձր դասարանի աշակերտները քանիցս անգամ որոշել են գնալ, և այլ այսպիսի յուզիչ տեղեկութիւններ, որ օրը օրին տպվում էին օրաթերթերում: Բայց որքան դէպքեր են պատահում, որ չեն արձանագրվում, որքան պատանի հերոսներ և հերոսուհիներ կան, որոնք սակայն փակված են վանդակների մէջ, որքան պատանիներ իրանց սրտի խորքում փայփայում են հայրենիքին ծառայելու գաղափարը և երդումներ են անում, որքան երիտասարդներ չեն համարձակվում իրանց ծառայութիւններն առաջարկել և քաշվում են ասպարէզ գալուց, որքան թաքնված ույժեր կան... Այս բոլորը անվիճելի ապացոյց է ներկայ պատերազմի ժողովրդական և ազգային լինելուն, երբ հայ ազգը լարելով իր բոլոր ույժերը՝ ի ցոյց է հանում իր ազգային ոգու մեծութիւնը և վեհութիւնը, որ յատկապէս երևում է աշակերտների բարձր տրամադրութեամբ և նրանց ձգտումներով:

Մատաղ սերունդի զգացմունքները և նրանց ձգտումների ուղղութիւնը ինքնին մի անսխալ աստիճանացոյց է, որով կարելի է չափել մի որևէ ազգի կենսունակութիւնը և բարոյական ուժեղութիւնը: Հայ նոր սերունդը իր ներկայ տրամադրութեամբ շատ որոշակի կերպով հաստատում է հայ ազգի գոյութեան իրաւունքը և ապագայի սպասելիքները:

Ի հարկէ հայ պատանիներին և աշակերտ-աշակերտուհիներին չէ կարելի պատերազմի դաշտ ուղարկել. չէ կարելի թոյլ տալ, որ նրանք վտանգի ենթարկեն իրանց կեանքը, տարված՝ գործելու և գաղափարի խենթ ոգևորութեամբ, Տոլստոյի Պետյայի նման («Война и миръ»), բայց և չէ կարելի ոչնչացնել կամ հեգնել նրանց բուռն ոգևորութիւնը, չէ կարելի անարձագանք թողնել հայրենիքի ազատագրութեամբ ոգորված աշակերտի խոկումները, չէ կարելի պահանջել պատանուց, որ նա դասարանում լուռ նստի ու լօգարիֆմներով ու տանգէս-կոտանգէսներով և նման մեռեալ գիտութիւններով զբաղվի, երբ նրա սիրտն է թփրտում պատերազմը մտաբերելիս, երբ նրա միտքը սլանում է հեռու, այնտեղ, ուր իր մեծ եղբայրներն են կռւում՝ դարաւոր թշնամուն յաղթելու համար: Անարդարացի և անիրաւացի կը լինի այդպիսի պահանջը. ամեն տարի չէ լինում այսպիսի պատերազմ, սերունդներ են նախապատրաստել, անվեհեր նահատակների և հերոսների երկար շարանն է անցել, մինչև որ վերջապէս հանգամանքների պայթիւնով ներկայ պատերազմը գոյացաւ. Ներկայ սերունդին է վիճակվել ականատես և ժամանակակից լինել այս աշխարհասասան պայքարին. ռուս-թիւրքական պատերազմը մի մասնիկն է այդ մեծ ընդհարման: Անթոյլատրելի և միանգամայն դատապարտելի կը լինի, եթէ ներկայ սերունդը ցանկանայ աչքաթող անել այս պատերազմը և իր սովորական ընթացիկ ապրումները շարունակէ: Որքան էլ ցաւալի լինի պատանիների և աշակերտների իրանց անմիջական գործից շեղվելը, որ խաղաղ ժամանակ չէր կարելի թոյլատրել, բայց ներկայ բացառիկ պայմաններում մենք հնարաւոր պէտք է համարենք այդ և խոհեմութեամբ աշխատելու ենք ուղիղ ընթացք տալ և հնարաւոր խստութիւններից և սայթաքումներից ապահովել պատանիների ոգևորութիւնը: Ճնշումը և բռնութիւնը անպէտք և անգործնական միջոցներ են այս դէպքում:

Այս խորհրդածութիւնները ինձ բերում են այն եզրակացութեան, որ պատանիներին և աշակերտներին նոյնպէս պէտք է հնարաւորութիւն տալ որևէ կերպ մասնակցել այս օրհասական և ճակատագրական պատերազմին. Մեր նշանաբանը պէտք է լինի օգտագործել իւրաքանչիւր ույժ, և այժմեան պայմաններում այդ օգտագործումը ուղղել պատերազմի մասնակցողների թիւը աւելացնելու և [illegible]: Չը պէտք է մոռանալ, որ պատերազմում միայն հրացան բռնող զինուորները չեն, որ գործ են կատարում, այլ և կան ուրիշ շատ գործօններ, որոց համեստութեան վարագոյրի ծալքերում են գործում: Պատերազմողները թէ յաղթելու և թէ յաղթվելու դէպքում տալիս են զոհեր, աւելի մեծ թւով վիրաւորներ, քան սպանվածներ. և ահա այդ վիրաւորների խնամելը, մահվան ճանկերից անհատներին ազատելը մի այնպիսի սուրբ և համեստաբար դիւրին ու անվտանգ աշխատանք է, որ ամենայն վստահութեամբ կարելի է յանձնարարել պատանիներին՝ խնամելու վիրաւորներին՝ բժիշկների ղեկավարութեամբ: Եթէ հայ պատանին, հայ աշակերտը կամ աշակերտուհին ցանկանում են որևէ կերպ իրանց լուման ևս գցել հայրենասիրութեան գանձարկղը՝ նրանք այս ասպարէզում կարող են այդ անել, և ոչ թէ անմիջապէս պատերազմի դաշտում, ուր մի գուցէ և լինեն աւելորդ և վնասակար ու խանգարող:

Բայց մէկէն ի մէկ հայ պատանին չէ կարող վիրակապ կամ սանիտար լինել, պէտք է նա վարժվի և ընտելանայ, պէտք է սովորի հիւանդի ու վիրաւորի հետ վարվել. այդ նպատակով ես անհրաժեշտ եմ համարում, որ Կենտրոնական Բիւրօն կամ մի ուրիշ մարմին ձեռներէց լինեն և հիմնեն սանիտարական դասընթացքներ, բացառապէս հայ պատանիների և երիտասարդների համար, ուր համեմատաբար կարճ ժամանակի ընթացքում կարդացվեն դասախօսութիւններ վիրաբուժութեան մասին, ցոյց տրվեն փորձեր և այլն:

Այդպիսի վիրաբուժական կամ սանիտարական դասընթացքներ կարելի է կազմակերպել Ներսիսեան և Յովնանեան դպրոցներին կից, Երևանում կամ Էջմիածնի ճեմարանում, հրաւիրելով դրա համար յատուկ բժիշկներ և վիրաբոյժներ, որոնց ղեկավարութեամբ պատանիները կը ծանօթանան այդ գործին և ապա կը գնան վիրաւորների մօտ՝ նրանց բժշկելու: Սա աւելի մարդասիրական աշխատանք է և այդ կողմը պէտք դարձնել նոր սերունդի գործունէութիւնը:

Չը մոռանանք, որ պատերազմը երկար է տևելու և ժամանակի հետ միասին բազմապատկվելու է վիրաւորների թիւը:

Մենք որ առաջ հասկանալու ենք ժամանակի պահանջը և յիշված ուղիղ ճանապարհն ենք ցոյց տալու մեր պատանիներին:

Իսկ ազգային հաստատութիւնները դանդաղելու չեն այս գործի ձեռներէցութիւնը իրանց վրա վերցնելու և շուտով իսկ կազմակերպելու:

Գ. Տէր-Ռուբինեան

լիս՝ պատերազմի պատրաստութիւններ տեսնելու: Եւ որպէսզի կռւի ընթացքում Պելոպոնէսի Դիմիտր և Թովմաս իշխանները չօգնեն Բիւզանդիոնին, նրանց դէմ ղրկեց սահմանապահ իշխան Թարխանին:

Կ. Պոլսից փախած մի մաջառ՝ Օրբան անունով մի մարդ՝ գտնվում էր Ադրիանուպոլսում և պարապում էր թնդանօթ ձուլելով: Սա խոստացաւ Ֆաթիհին ձուլել մի այնպիսի խոշոր թնդանօթ, որով կարելի կը լինէր Կ. Պոլսի պարիսպները քանդել: Կարճ ժամանակամիջոցում պատերազմի բոլոր պատրաստութիւնները տեսնվեցին: Օրբանը կատարեց իր խոստումը. ձուլեց մի այնպիսի հսկայ թնդանօթ, որին քաշելու համար 50 զոյգ եզներ էին հարկաւոր և 200 մարդ, որպէսզի այս ու այն կողմ չը ծռվի:

Սուլթանը որքան որ գործում էր իր սեփական կամքով, այնու ամենայնիւ նայում էր ժողովրդի տրամադրութեանը: Երեկոները ծպտեալ մտնում էր ժողովրդի մէջ և սեփական ականջով տեղեկանում այն ասուլիսի մասին, որ տեղի էր ունենում Բիւզանդիոնը գրաւելու վերաբերմամբ:

Մահմէդի նուրբ քաղաքագիտութիւնն աւելորդ չի համարում խորհուրդ հարցնելու նաև իր մեծ-եպարքոս Խալիլից, իր ձեռնարկած գործի առիթով: Եպարքոսն ասում է. «Տէր Աստուած, որ յանձնեց աշխարհի մեծ մասը քո ձեռքի տակն է դրել, չի յապաղի և նրանց մայրաքաղաքն էլ քո ձեռքն յանձնելու»:

1453 թւի փետր. ամսին մեծ թնդանօթը Ադրիանուպոլսից փոխադրում են Նորակառոյց բերդը: Իսկ զօրքի փոխադրութիւնը յետաձգվեց մինչև ապրիլ: Մահմէդի հսկայական բանակը, թւով 200,000, շարժվեց դէպի Կ. Պոլիս, որին ընկերանում էր 420 նաւերից ու նաւակներից բաղկացած նաւատօրմիղը, որը կառավարում էր բուլղարացի Բալթա-օղլին:

Մեծ թնդանօթը զետեղվեց Ս. Ռոմանոսի դրան դէմ. այդ հրէշ-գործիքը օրական 7 անգամ էին կարողանում պարպել: Սրանից ոչ պակաս երկու խոշոր թնդանօթներ ևս շինվեցին և չորս հատ շարժական աշտարակներ, որոնց դրսից ու ներքին կողմից ապահովութեան համար պատել էին եզան մորթով:

200,000 զօրքից՝ 100,000-ը հեծեալ էր և աջ թևն էր կազմում, իսկ ձախ թևը 50,000 զօրք ունէր և տարածվում էր մինչև Վլախեռնի կոչված վայրը: Արշաւանքի կենտրոնական մասն առաջնորդում էր ինքը՝ Ֆաթիհը 15,000 ենիչէրիներով: Ղալաթիայի ետևի մասը պաշարված էր Զաղնոս փաշայի հրամանատարութեան տակ գտնված զօրքերով:

Այն ժամանակվայ համար մի այսպիսի հսկայ բանակի դէմ ինչ կարող էին դուրս բերել յոյները:

Դժբաղդ Կոնստանտին կայսրը, տեսնելով որ ի դերև ելան այն յոյսերը, որ դրած էր արևմուտքի վրա պապի միջոցով, ստիպվեց բաւականանալ միմիայն այն ույժերով, որ արդէն Կ. Պոլսում կար: Միմիայն վենետիկցիներն ու Ջենովացիներն էին, որ մի քանի նաւեր ուղարկեցին օգնելու թշնամիների դէմ:

Ջուստինիան զօրապետը ցոյց է տալիս իր ույժերի վերին աստիճանի լարումն՝ կայսերական զօրքերը կառավարելիս, որոնց թիւը հասնում էր մօտ 5000-ի:

Իսկ 14 նաւից բաղկացած նաւատօրմիղը ղեկավարվում էր յոյն ծովակալ Ղուկասի ձեռքով:

Յոյներն ունէին և մի ուրիշ միջոց, որով մի քանի անգամ կարողացել էին յաղթել արաբացիների յանդուգն արշաւանքները: Սա մի հեղուկ էր, որ գտել էր Գալլինիկոս յոյնը, և արձակում էին թշնամու վրա՝ խողովակների միջոցով: Դեռ մինչև օրս չեն կարողացել իմանալ այդ նիւթի բաղադրութեան մասին:

Ապրիլ ամսվայ 15-ին, օսմանեան նաւատօրմիղը Բեշիկթաշի առջև խարիսխ գցեց և մինչ սպասում էր սուլթանի հրամանին, ահա Ջենովական հինգ նաւեր երևացին, որոնք գալիս էին բիւզանդացիներին օգնելու: Սկսվեց մի սարսափելի նաւամարտ, որտեղ օսմանցիք յաղթվեցին և փախան, չը դիմանալով յունական կրակին և քաջարար կռւողների նետերի առջև: Ջենովական նաւերը մտան մի ապահով խորշ և շղթայով փակեցին օսմանեան նաւատօրմիղի մուտքն այնտեղ:

Սուլթանը, որ մինչ այդ ափից նայում էր և տեսնում էր իր հակառակորդների խիզախ կռիւը և իր նաւատօրմիղի փախուստը, սաստիկ զայրացաւ. և որպէս զի զօրքին խրախուսի, ձիով արշաւեց Բոսֆորի մէջ, որը, ի հարկէ, ապարդիւն անցաւ:

Վերոյիշեալ նաւերի հետ ունեցած ընդհարումը և անաջողութիւնը խորը տպաւորութիւն թողեց եպարքոս Խալիլի վրա, որ խորհուրդ տուեց Մահմէդին պաշարումը վերջնել և նորից դառնալ Ադրիանուպոլիս, առարկելով որ թէ տնտեսապէս և թէ ռազմապէս ուժեղացան յոյները և որոնց դէմը գործելը մի աւելորդ փորձ կը լինի:

Սուլթանն առանձին կամեց քննելու Խալիլի առաջարկը: Զաղնոս փաշան, մօլլա Մէհմէդ Կիւրանին և մեծ շէյխ Ակշէմսէդդին հակառակեցին այդ առաջարկին և պնդեցին, որ պաշարումը մինչև վերջը պէտք է շարունակվի: Բայց երբ սուլթանը խորհուրդ հարցրեց, թէ ինչ կերպով կարելի է քաղաքն առնել, բոլորն էլ լռեցին, չիմանալով թէ ինչ պատասխանեն, որովհետև ռազմագիտութիւնից ոչ մի տեղեկութիւն չունէին և բնականաբար մի այդպիսի դժուար խնդրի առիթով ոչինչ էլ չը պիտի կարողանային պատասխանել:

Սուլթանն սկսեց ինքնագլուխ գործել վերջին արշաւանքները: Հրամայեց, որ նաւերը նոր պատրաստած տախտակամածների վրայով քարշ տան քաղաքի այն կողմերը, որոնք անպաշտպան էին և որի միջոցով միայն կարելի էր վճռական քայլ անել: Արդարև՝ սուլթանի այս ծրագիրը դրական հետևանքներ ունեցաւ ի մեծ վնաս Պոլսի և յօգուտ օսմանցիների:

Նախ քան վերջնական արշաւանքը գործելը, Մահմէդը իր ցեղակից Իսֆենդիարին, իբրև դեսպան, ուղարկեց Կոնստանտին կայսեր մօտ, յայտնելու որ եթէ յանձն է առնում հպատակութիւն, օսմանցիք նրան խաղաղութիւն են խոստանում և արշաւանքը վերացնում են Պոլսի վրայից. իսկ եթէ հակառակը պատահի, պիտի կռւեն մինչև վերջ: Կայսրը դեսպանի միջոցով սուլթանին պատասխանում է հետևեալ կերպով. «Երանի թէ որքան իր խոստումն յարգէր իր նախնեաց նման և բաւականանար միմիայն այն հարկով, որով գոհանում էին իր նախնիքը, և քաղաքին ձեռնամուխ չը լինէր, որովհետև ես վճռել եմ մեռնել իմ քաղաքում, քան թէ անձնատուր լինել»:

Այս պատասխանը զայրացրեց Մահմէդին, որը իսկոյն հաւաքեց իր զօրավարներին և երդվեց, որ թոյլ է տալիս նրանց կողոպտելու քաղաքի բոլոր հարստութիւնները և, քաղաքը գրաւելիս, նրանցից իւրաքանչիւրը կարող է առանձին տներ սեփականել:

Այս լուրը իսկոյն տարածվեց բանակում և բոլորի կողմից ցնծութեան աղաղակներով ընդունելութիւն գտաւ:

Մայիսի 28-ին սուլթանը հրամայեց պատրաստվելու հետևեալ օրվայ վճռական յարձակման համար: Նախորդ երեկոյեան օսմ. բանակի զուռնի ու կոչումը սարսափելի երկիւղ էին ազդում Կոնստանտին կայսեր վրա, որը աւագանու հետ գնաց Այա-Սոֆիա, հաղորդութիւն առաւ և վերադարձաւ զօրքի մէջ, ամբողջ գիշերը խրախուսանք կարդալով:

Առաւօտեան վաղ օսմ. թնդանօթները սկսեցին որոտալ: Զօրքերը անպատմելի քաջութիւն էին գործում պարիսպներից բարձրանալիս: Բիւզանդացիք լարել էին իրանց ամենավերջին ույժերը՝ պահպանելու քաղաքը սոսկալի յարձակումից: Յունական կրակը հրաշքներ էր գործում թշնամու վրա: Բայց դժբաղդաբար այս բոլոր ջանքերն ի դերև ելան: Ջուստինիան զօրապետը վիրաւորվելով քաշվեց Ղալաթիա: Զօրքը մեծ յուսահատութեան մատնվեց: Քաղաքացիների սարսափելի ճիչը գնալով խրախուսում էր օսմանցիներին, և յանկարծ լսվեց, որ թիւրք զօրքերը Այվան-սարայի դռնով մտան քաղաքը:

Կոնստանտին կայսրը ընկճվեց այս լուրն իմանալուն պէս. սակայն իր արիութիւնը չը կորցնելով բացագանչեց՝ «Լաւ է մեռնել, քան թէ կենդանի մնալ և տեսնել գահիս յափշտակութիւնը» և յուսահատօրէն յարձակվեց թիւրքերի վրա և նորից գոչեց՝ «Միթէ չը կայ մի քրիստոնեայ, որ գլուխս կտրէ»: Ահա այդ խորհրդաւոր վայրկեանին, մի քանի ենիչէրիներ պաշարեցին դժբաղդ կայսրին և սպանեցին:

Սրանով վերջանում է բիւզանդական կայսրութիւնը նրա վերջին անվեհեր Կոնստանտին Պալէօլոգ կայսեր մահով և Բիւզանդիոնի անկումով:

Տիգրան Թովմասեան

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԻՒՂԻ ՀՈԳԵԿԱՆ ԱՊՐՈՒՄՆԵՐԸ

II

Ապրածս գիւղը գտնվում է կովկասեան այն նշանաւոր խճուղու վրայ, որի մի ծայրը ձգվելով հեռու՝ միանում է ռազմաբեմի զանազան կէտերին։

Ահա այդ ճանապարհով անդադար ու միալար անցնում են բեռնաւորված սայլերի ու կառքերի երկարաշար կարաւանները...

Կանգնի՛ր հէնց նոյն ուղիի եզերքին, մի քանի ժամ անընդհատ դիտիր անցուդարձ անողներին և քեզ համար որպէս հայելի կը պատկերանան ժամանակակից գիւղում առաջացրած բնորոշ տրամադրութիւններն ու ապրումները։

Դանդաղաքայլ անցնում են սայլերը։ Ահա առջևիցս անցաւ մի ծերունի սայլապան, յոգնած ու վհատ, անհաստատ ու երերուն, գլուխը կախ ու դէմքը մռայլ։ Ապա մի պատանի հե ի հե, իրանից երկար ու բարակ «ճիպոտը» թափահարելով և սայլի շուրջն անտեղի պտոյտներ անելով։ Գալիս է մի ալեզարդ ծերունի, բայց աւելի զուարթ և աւելի յուսահատ. նրան յաջորդում է մի գիւղական պառաւ «Նանին»՝ անշարժ նստած սայլի գլխին, տխրադէմ ու մտախոհ, երբեմն անգիտակցաբար թափահարելով խարազանը։ Այժմ անցնում է մի գեղատեսիլ գեղջկուհի, տղամարդու կիսատարազով, անհոգ ու աշխոյժ, դէմքը զուարթ ու ժպտուն, գլուխը բարձր բռնած, կամացուկ գեղգեղալով «լէ, լէ, եաման» սիրերգը...

Կարաւանի շարաններում հուժկու տղամարդու կամ առողջ երիտասարդի չես հանդիպի. այդ տիպերը հազուագիւտ են, նրանց տեղը հեռու է, լուծը ծանր և ճակատագիրն անողոք։

Նկարագրածս սայլերի կարաւանի մի ծայրը հասնելով գիւղի հրապարակը՝ կանգ առաւ. յոգնած ու տանջված եզները խոր շունչ քաշեցին։

Առաջին շարքի սայլերի մէկի վրայից մի ոստիւնով թռչում է ներքև նախշուն «արախչին» գլխին, նուրբ դիմագծերով, սիրունատես մի երիտասարդ, շտապ արձակելով եզներին ու բռնելով նրանց պոզերից կապած երկար պարանից, քաշում է դիմացի խանութի առաջ՝ պայտել տալու։

Երիտասարդը դէպի իրան է գրաւում իմ ամբողջ ուշադրութիւնը։ Սկսում եմ մանրազննին դիտել նրան՝ ոտից մինչև գլուխ։ Հասակը բարակ ու երկար, մէջքը կլոր ու ճկուն, քայլերը համաչափ և շարժումները մեղմ ու նազանի։

Գիւղական կարմրագոյն «չուխայի» տակից երևում են... «մինթանայի» կապտաւուն ծալքերը։ Հետաքրքրութիւնս աւելի է լարվում։ Անցնում են մտքովս զանազան ենթադրութիւններ ու կասկածներ...

Այս ամէնը պարզելու, փարատելու համար մօտենում եմ մի ծերունի սայլապանի և սկսում եմ հարցուփորձս։

— Ո՞րտեղացի էք, բարեկամ...

— Լօռու շահնազարցի։

— Բիձա, Աստուածդ սիրես, ուղիղն ասա, էն ջահել չիւանը,—ցոյց եմ տալիս մատով,—տղա՞յ է թէ աղջիկ...

Ծերունու դէմքը փայլում, ժպտում է։ Ուղղում է վրաս խորհրդաւոր հայեացք և քահ-քահ ծիծաղում։

— Մեռնեմ արևիդ. քեզանից ի՞նչ ծածկեմ. աղջիկ է, աղջիկ... Մեր «Գիւլօն» է։ Գեղեցիք «ղըզ-օղլան» են կանչում։ Տէրն էգոր աւելի կեանք ու խուաթ իտայ. էգոր «կանաչ կարմիր» արևով է խնդում մեր գեղը։ Գինա՞ս ինչ... Էգ թալանը շատուց նշնել են... Էգոր նշանածը ու ջոջ ախպէրը գնացել են «խուլուղի» (ծառայութեան), պստիկ ախպէրը ազգի օղուրին կամաւոր է գրվել... Գիւլօյիս հէրը մի զօրական տղամարդ էր. համա ինչ անես, որ էս մի տարի ջանը ցաւ է փէյտան արել. ընկել է չլեր (անկողին)։ Էն քարխանա օջախը մնացել է Գիւլօյի ումուտին... Հլա գարունը նոր բացվաւ Գիւլօս կպաւ գործի։ Աղջիկ չէ, կրակ է, կրակ... իրան լաւ դրկցից բոլ հերկեց, բոլ ցանեց, մեզնից բոլ իրա տան թադարիկը (պատրաստութիւնը) տեսաւ։ Հըմա էլ մըղի չափ ակլին «քըէհ» է բարձել, Գիւմրի է տանում։ Հալա՛լ ու զուլալ էղնի էգոր Մամու կաթը... Աղջի՛կ չէ Գիւլօս, մուրա՛զ է, մուրա՛զ...

Այս փոքրիկ զրոյցի միջոցին, Գիւլօն, առաջին հերթին պայտել տալով եզներին, արդէն եա էր բերել սայլի մօտ. մի քանի վայրկեանում լծում է, թռչում է սայլի ուսին և զալար ճիպոտը վերցնելով սպառնում է միւս ընկերներին։

Գոյութեան կատաղի պայքարը ծնում է գեղջկական տիպեր։

Գիւղական միջավայրի տագնապալից պայմանները տալիս են Գիւլօյի նման հերոս կանանց, որոնք ոտնահարելով աւանդամոլ կարգերն ու դարաւոր նախապաշարմունքը՝ դէն են շպրտում իրանց ուսերից տարկացնող լուծն և ազատվում են տղամարդու անտեղի «խնամակալութիւնից»։

Թող ֆիզիօլօգներն որքան ուզում են հաստատեն, թէ կանայք ստեղծված չեն ֆիզիքական աշխատանքներ կատարելու համար, բայց իրական կեանքի բազմաձև փորձերը մեզ բոլորովին ուրիշ բան են ասում...

Կարաւանը շարժվելու ազդանշանը տրվեց։ Գիւլօն բարձրացրեց ճիպոտը։ Նրա հաստավիզ եզները յամրաքայլ շարունակեցին իրանց երկար ուղին։

Կարաւանը կամաց-կամաց հեռանալով խորասուզեց ինձ մտորմունքների ու խոհերի ծովում.

Գիւղական «ղըզ-օղլանի» առնական բնոյթագծերն ու դիմացկունութիւնը բացեց իմ առաջ ճնշված սեռի գեղածիծաղ ապագայի գրաւիչ հեռանկարը...

Մեծ-Ղարաքիլիսա Репортеръ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Մաղթանք, հոգեհանգիստ եւ հանգանակութիւն

Կազարմա գիւղ (Կուբան. շրջ.), 28 յուն.

Այսօր գիւղիս ս. Կարապետ աղօթատան տօնն էր, բազմութիւնը շատ էր, որոնք ուխտաւորներ էին և եկել էին շրջակայ գիւղերից։ Այստեղ էր նաև Թիֆլիսի Հայկ. Կենտրոնական Բիւրոյի կողմից լիազորված Գարեգին Մեղաւորեանը, որը եկել էր կամաւորներ հաւաքելու։ Պատարագից յետոյ կատարվեց կայս. մաղթանք, ապա հոգեհանգիստ՝ ներկայ մեծ պատերազմում ընկած քաջ հերոսների յիշատակին. դուրսը աղօթատան բակում բոլոր հանդիսականներին տրվեց ճաշ և բաժանվեց մատաղի միս։ Ճաշից յետոյ ի լուր հանդիսականների խօսեց Գարեգինը և շեշտեց, որ այսօր մեծ կարիք է զգացվում կամաւորի։ Գիւղի երիտասարդներից գրվեցին 27 հոգի կամաւոր, որոնք առաջիկայ կիրակի բժշկական քննութեան են ենթարկվելու։ Յիշեալ Գարեգինի նախաձեռնութեամբ հանգանակվեց նաև 150 ր. փող և վճռվեց հանգանակված գումարի կէսը յատկացնել հայ կամաւորների օգտին, իսկ կէսը ուղարկել Հայ Նպաստամատոյց Ընկերութեան՝ հայ փախստականների օգտին։ Ընտրվեց Կազարմա գիւղի համար հայկական կոմիտէտ՝ հայ կամաւորների և փախստականների կարիքներին նպաստելու։

Մխաէլ

ԳԱՒԱՌԸ ՇԱՀԱԳՈՐԾՎՈՒՄ Է

Շատ յաճախ են երևան գալիս գաւառում գեղարուեստագէտի անուան տակ այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իբր «դերասաններ» շահագործում են հասարակութեան գրպանն ու ճաշակը, դերասաններ՝ որոնց գոյութեան մասին հասարակութիւնը բոլորովին գաղափար չունի։ Ամէն ամառ այդ բաղդին է արժանանում Մեծ-Ղարաքիլիսա ամարանոցը, ուր շաբաթը 2—3 անգամ ներկայացում է տեղի ունենում. մի շռայլութիւն, որ Թիֆլիսին անգամ չի աջողվում։

Բանը նրանումն է, որ այստեղ ծախսերը շատ չնչին են լինում, 15—25 ր., և եթէ սրանից դուրս մի 15 ր. էլ զուտ արդիւնք է մնում, սա արդէն մի մեծ աջողութիւն է բաղդախնդիր դերասանի համար։

Ինչպէս ինձ մեծ ցաւ է պատճառում, որ մեր գաւառը նման բաղդախնդիրների ձեռքին իբր խաղալիք և շահատակութեան միջոց է ծառայում։ Որևէ անյայտ սիրող քաղաքում 2—3 անգամ բեմ դուրս գալով, հայոց լեզուին չը տիրապետելով հանդերձ, իրան միանգամայն պատրաստված դերասան երևակայելով՝ յաւակնում է ինքնուրոյն պատասխանատու ներկայացումներ կազմակերպել։

Գարբերական Թալանի մի նմուշ էր արդէն յունիսի 27-ին տրված ներկայացումը՝ ոմն դերասան համարվող Խօսրովեանի ղեկավարութեամբ, որի անունը առաջին անգամն էինք լսում։

Դրված էր Ահարոնեանի «Արցունքի հովիտ» պիէսը։ Ասլանի գլխաւոր դերը խաղում էր ինքը պ. Խօսրովեանը։

Պէտք է ասել, որ եթէ այդ պիէսում մի գրաւիչ բան կայ, դա նրա դեկորատիվ բաժինն է. իսկ Ղարաքիլիսայի բեմի վրա այդպիսի մի անծանօթ և անշնորհք դերասանի ղեկավարութեամբ դրված գործը պարզ է, որ ծիծաղ և ֆիասկօ միայն առաջ կը բերէր։ Եւ մեղքս ինչո՞ւ թաքցնեմ. եթէ հարևանս հետաքրքիր անձնաւորութիւն չը լինէր, մի վայրկեան անգամ չէի կարող մնալ թատրոնում։ Դերասանական արուեստի մէջ միանգամայն պրօֆան զգալով ինձ, բայց և այնպէս հաւատացնում եմ, որ նրանից լաւ կը կատարէի այդ դերը։ Սակայն այդ դեռ ոչինչ։

Ասլանի մօր դերը ներկայ հասարակութեան առաջ խաղում էր մի ուսանող։ Սա արդէն զաւեշտական լինելուց զատ՝ խայտառակութիւնից էլ մի բան աւելի էր։ Ոչինչ՝ եթէ նրա մէջ գոնէ կանացի հեռաւոր նմանութիւն լինէր։ Քնքոյշ սեռի հագուստ՝ սակայն տղամարդու կոշտ ձայնով, կոպիտ շարժումներով։

Ռեժ-Մնօյի դերում իր խաղով անման էր միայն տեղական ուսուցիչներից մէկը, որ գեղարուեստական բաւականութիւն պատճառեց հանդիսականներին. սակայն մի ծաղկով գարուն չի գայ։

Այդ ներկայացման նախաձեռնողներ էին հանդիսացել տեղիս ուսանողները, որոնք այդ պիէսը դրել էին «чашка чая»-ի օգտին, և թէև նպատակը բարեգործական էր, բայց և այնպէս չէ խանգարում մեզ ասել, որ որևէ նպատակ առաջ տանելու համար աւելի լաւ է մուրացկանութեան դիմել, քան անշնորհք դերասաններով ներկայացում կազմակերպել։ Ես չեմ արդարացնում այն նպատակը, որ առաջ է տարվում պ. Խօսրովեանի նման անշնորհք դերասաններով և նրա «տաղանդի» երկրպագուներով։

Թիֆլիսի Հայ Դրամատիկական Ընկերութեանը ես մի հարց կը տայի. արդեօք հնար չունի՞ նա նման բաղդախնդիրներից փրկելու գաւառը. չէ՞ որ սա էլ մեղք է. չէ՞ որ այստեղ էլ անհրաժեշտ է իսկական գեղարուեստի ճաշակ զարգացնել։

Արշամ Հօրոմեան

Մեծ-Ղարաքիլիսա

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

◆ Անտանելի շոգերից յետոյ, յուլիսի 9-ի երեկոյեան և 10-ին ցերեկով քաղաքում անձրև եկաւ, որից եղանակը փոքր ինչ զովացաւ։

◆ Վերադարձաւ Պետրօգրադից անդրկովկասեան երկաթուղիների կառավարիչ Վասիլևսկին։

◆ Կովկասի փոխարքայի խորհուրդը իր վերջին նիստում որոշել է յատկացնել 646,125 ր. հակաժանտախտային ձեռնարկութիւնների և Զաւոնաբթի կայարանի պահպանութեան համար։

◆ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆը մեկնեց Հիւսիսային Կովկաս, ուր այցելելու է դպրոցական հաստատութիւնների մէջ բացված լազարէթները։

◆ Կովկասեան գլխաւոր վարչութիւնը, կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի ղեկուցման համաձայն, թոյլատրել է քննութեան ենթարկել այս տարվայ օգոստոսի 1-ին Թիֆլիսի 2-րդ գիմնազիայում 2-րդ կարգի կամաւոր զինուոր դառնալու համար ցանկացող անձանց։ Քննութիւններին մասնակցելու իրաւունք ձեռք բերելու համար հարկաւոր է խնդրագիր ներկայացնել հոգաբարձուի անունով մինչև յուլիսի 28-ը, ներկայացնելով ծննդեան վկայական, մկրտութեան վկայական և երկու լուսանկար։

◆ Բորսային կոմիտէտը ներկայացուցիչ է ընտրել Օդեսսայում բնակվող Մ. Բոյաջեանին՝ մասնակցելու համար Ռուսաստանի հարաւի արդիւնաբերութիւնների համագումարին։

◆ Վերջին ժամանակ էլէքտրաքարշի ընկերութեան պահեստում մազութը պակասել է. այդ առիթով էլէքտրաքարշի վարչութիւնը դիմել է կովկասեան գլխաւոր կառավարչին և քաղաքային վարչութեանը, խնդրելով աջակցել, որպէսզի հարկաւոր քանակութեամբ մազութ ստացվի, այլապէս կարող է պատահել, որ էլէքտրաքարշի երթևեկութիւնը կանգ առնէ։

◆ Էլէքտրաքարշի ընկերութեան վարչութիւնը պատճառաբանեալ գրութիւն է ներկայացրել Թիֆլիսի նահանգական դատարանին՝ քաղաքի պահանջի առիթով, որի ոյժով ամբողջ էլէքտրաքարշի ձեռնարկութիւնը յանձնվելու է քաղաքի տնօրէնութեան։

◆ Կովկասեան գլխաւոր կառավարիչ գեներալ Ս. Վ. Վօլսկու նախագահութեամբ գործող մասնաժողովը վճռել է 2-րդ արական գիմնազիայի շինութիւնը թողնել № 23 լազարէթի համար, իսկ 5-րդ իգական և 6-րդ արական գիմնազիաների շինութիւնները ազատել մինչև յուլիսի 20-ը։ Մասնաժողովը որոնում է շէնքեր նաև յիշեալ լազարէթների համար։

◆ Տեղեկութիւններ են ստացվել, որ Ռոստովում և այլ ջրաղացներում ալիւրի գինը ընկել է տոպրակին 50 կոպէկ։ Այդ պատճառով քաղաքային վարչութիւնը ետ է վերցրել նահանգապետի դիւանատնից հացի սակագինը աւելացնելու իր վերջին միջնորդութիւնը։

◆ Մինչև յուլիսի 9-ը քաղաքային սուրվարակիչ հիւանդանոցում մնում էին քութէշով հիւանդներ 14 հոգի, բծաւորով՝ 8, ծաղիկով՝ 17, փորհարեքով՝ 4 և դիզենտերիայով 8։

◆ Երէկ թաղեցին Թիֆլիսի դատաստանական պալատի անդամ Վալէրիան Կոնստանտինովիչ Օրլովսկուն, որ յայտնի էր իբրև վերին աստիճանի անաչառ դատաւոր և գեղեցիկ բնաւորութեան տէր անձն։ Թաղմանը ներկայ էին հանգուցեալի կօլէգները և յարգողների մեծ բազմութիւն։

ԿՈՎԿԱՍ

◆ Բագուի քաղաքային դումայի նիստում որոշվեց խնդրել Պետական Դումայի անդամ Միք. Պապաջանեանին պաշտպանել Բագու քաղաքի միջնորդութիւնը Կովկասում զէմստվօ մտցնելու մասին։

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ «Р. У.»-ին հաղորդում են Պետրօգրադից. «Գօրեմըկինը նշանակվում է Պետական խորհրդի նախագահ և ստանալու է կոմսութիւն։ Դումայի բացման օրը կառավարութեան անունից հանդէս կը գայ Կրիվօշէինը, որ նշանակվում է մինիստրների խորհրդի նախագահ»։

◆ Մոսկվայում այրվեց հակագազերի արհեստանոցը։ Կրակին զոհվեցին 8 կին. այրուածքներ ստացան 2 երեխայ։ Իրարանցման ժամանակ պատուհաններից փողոց նետվեցին մօտ 80 բանուորուհի։

◆ Արդարադատութեան նոր մինիստր Խվօստովը թէև աջակողմեան, բայց իր աւելով վէմ է Շչէգլովիտովի քաղաքականութեան։ Նա յայտնել է, որ բոլոր սահմանափակումները Լեհական Թագաւորութեան վերաբերմամբ շուտով կը վերանան։

◆ Պետրօգրադից հեռագրում են, որ բացի Գօրեմըկինից՝ Պետական Խորհրդի նախագահի պաշտօնի համար տալիս են նաև Դուրնովօյի, Սրէշինսկիի և կոմս Կոկովցևի անունները։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Յուլիսի 7-ին, երեկ. ժամը 10-ին, քաղաքային այգում, Արամեանի հիւանդանոցի մօտ, գտնվեց իգական սեռի նորածնի դիակ, որն ուղարկվեց Միքայէլեան հիւանդանոցը։

◆ Հանքային ինժեներ Վլադիմիր Սուխարէվը, որ ժամանակաւորապէս ապրում է «Պալաս-Օտէլ» հիւրանոցում, յայտնեց գաղտնի ոստիկանութեան պետին, որ յուլիսի 9-ի առաւօտեան երևան հանեց, որ իր քսակը, որի մէջ կար 1150 ր., զէնքի թոյլատրութեան վկայական և թղթեր, անհետացել է։ Սուխարէվը չը կարողացաւ կորուստ կերպով յայտնել, թէ գողացե՞լ են, արդեօք, քսակը իր սենեակից, թէ՞ թողել է հիւրանոցում սեղանի վրա, ուր յիշեալ օր նա ընթրելիս է եղել։

◆ Խուզարկու ոստիկանութեան պաշտօնեաները ձերբակալել են զինուորական ծառայութիւնից խուսափող Գորու գ. բնակիչ Արշակ Միքիտեանին։

◆ Յուլիսի 9-ին, ցերեկ. ժամը 2-ին, Նոր շուկայում, Մատվէյ Ֆէօդորովը վէճի ժամանակ վէրք հասցրեց Գէորգ Յարութինեանին ստամոքսից։ Վիրաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոց, իսկ յանցաւորը ձերբակալված է։

◆ Վլադիկավկազի շրջանի բնակիչ Նիկոլայ Պօգօյէվը յայտնեց ոստիկանութեան, որ յուլիսի 8-ին, նրա բացակայութեան ժամանակ, նրա բնակարանից (Մօլօկանսկայա փող., № 29), կեղծ բանալիի օգնութեամբ անյայտ անձեր գողացել են երկու գորգ, «Սմիտ և Վէսօն» սիստէմի ատրճանակ 50 փամփուշտով և 253 ր. զանազան ոսկէ ու արծաթէ իրեր։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հեռագրական մի նոր մեքենայ.—Հեռագրական հաղորդակցութիւնների մէջ զանազան դիւրութիւններ մտցնելու խնդիրը վաղուց է հետաքրքրում գիտական աշխարհին։ Վերջերս մի նոր քայլ է արել այդ ուղղութեամբ ռուսազգի մոսկվաբնակ Ն. Պ. Տրուսևիչ։ Մոսկվայի և Պետրօգրադի պօստ-հեռագրական շրջաններում Տրուսևիչի գիւտը մեծ հետաքրքրութիւն է շարժել։ Այդ նորութիւնը պէտք է մէջ բերէ մեծ փոփոխութիւններ ինչպէս հեռագիրներ տալու պրօցէսի, այնպէս էլ հեռագրական գործի տեխնիկական կառուցուածքների մէջ։

Լրագիրները հաղորդում են, որ այս օրերս Տրուսևիչի ապարատը քննութեան է ենթարկվել և առաջացրել է մեծ հետաքրքրութիւն։

Մինչև այժմ գործադրվելիք Բոդոյի և Ուիտսոնի թանգ ու բարդ գործիքները այսուհետև կարող են փոխարինվել Տրուսևիչի պարզ գործիքով, որը ըստ կազմութեան մի հասարակ և փոքրիկ ապարատ է։

Գործիքը գրող մեքենայի հետ միացվում է լարով։ Հեռագիրները մեքենայի օգնութեամբ տրվում են միաժամանակ մի քանի լեզուներով։ Իւրաքանչիւր զարկը գրող մեքենայի ստեղունքին՝ տալիս է որոշված կայարանին Մօրզի համապատասխան տառը։ Հեռագրի խփելու արագութիւնը կախված է մեքենայի վրա աշխատողի ընդունակութիւնից։ Որքան արագ շարժվեն ձեռները, այնքան էլ աւելի մեծ քանակութեամբ հեռագիրներ կը տրվեն։

Տրուսևիչի գիւտը լինելով մի բոլորովին ինքնուրոյն մեքենայ և ունենալով փոքրիկ ծաւալ՝ հնարաւորութիւն է տալիս յարմարեցնել ամէն տեսակ մեքենայի. սրա համար հարկաւոր չեն ոչ առանձին հսկողութիւն, ոչ մեքենավարներ և ոչ հեռագրատաներ։ Գիւտը խոստանում է ժամանակով զարգացնել հեռագրի գործադրութիւնը լայն չափերով՝ նման մեր ժամանակակից հեռախօսների։

Ժամանակաւոր խմբագիր՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ
Հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
(Թիֆլիսի ժամերով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է՝

№ 3	դէպի Բաթում	1 ժ. 45 ր. ցերեկ.
№ 4	» Բագու	7 ժ. 3 ր. երեկ.
№ 6	(արագ) »	12 ժ. 8 ր. ցերեկ.
№ 9	» Բաթում	8 ժ. 53 ր. երեկ.
	» Ջուլֆա	8 ժ. 5 ր. երեկ.
	» Բօրժոմ	3 ժ. 20 ր. ցերեկ.

ԺԱՄԱՆՈՒՄ Է ԹԻՖԼԻՍ՝

№ 3	Բագուից —	12 ժ. 54 ր. ցերեկ.
№ 4	Բաթումից —	5 ժ. 55 ր. երեկ.
№ 5	Բագուից (արագ)	7 ժ. 41 ր. երեկ.
№ 10	Բաթումից —	9 ժ. 51 ր. առաւ.
	Ջուլֆայից —	8 ժ. 11 ր. առաւ.
	Բօրժոմից —	7 ժ. 25 ր. առաւ.

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՄԱՐԵԱՆ—9½—3 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկահատ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեխ. հիւանդ. և շտաբ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ-Բ.ԺԻՇԿ ՏԷՐ-ԴԱՒԻԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—116

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայոց միջնակարգ դպրոցներում ցանկանում է պաշտօնավարել
ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
(թեմականաւարտ), որը աւարտել է Պետրօգրադի պսիխօնևրօլօգիական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտէտի գրական-պատմական բաժինը (մասնագէտ ռուսաց և ընդհանուր պատմութեան)։ Հասցէն՝ Елисаветаполь, Аптека Баласанова, учителю.
(յուլ. 11, օգ. 1) 429. 3—2

Ղշլաղի ծխական երկդասեան դպրոցի համար հարկաւոր են
ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻ
1) Աւանդելու է նկարչութիւն և ձեռագործ—15 դաս։
2) Թւաբանութիւն, հայոց լեզու և բնագիտութիւն—20 դաս։
Պայմանների հետ ծանօթանալու համար անձամբ դիմել մինչև ամսիս 15-ը «Մշակի» գրասենեակ՝ Մ. Ղազարեանին։ Իսկ խնդրագիրն ուղարկել հետևեալ հասցէով՝ Б. Караклисъ, сел. Кишлягъ, Попечительству арм. школы.
462. 2—1

„Գուտտենբերգ"
գրավաճառանոցում վաճառվում են.

Հայաստանի մանրամասն գունաւոր քարտէզ, Աբեղեանի	1 ր.
Հայի հայրենիքը. Հայաստանի գունաւոր քարտէզով, Լէօյի	60 կ.
Հայ արուեստից նշխարներ Անիի, լուսանկարներ, պլաններ՝ բացատրութիւններով, խմբագրութեամբ Ն. Մառի	5 ր. 50 կ.
Բառարաններ Հայերէնից-ռուսերէն 1 ր. և ռուսերէնից հայերէն, Թումանեանի	1 ր. 25 կ.
Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին Ահարոնի	25 կ.
Բառարաններ Հայերէնից-ռուսերէն 6 ր. և Ռուսերէնից-հայերէն, Դաղբաշեանի	8 ր.
Ռուսերէն սովորելու հեշտ միջոցներ հայերէնի օգնութեամբ համառօտ եւ ընդարձակ	40 կ., 50 կ. և 1 ր. 50 կ.

Դիմել՝ Тифлисъ, Г. И. Галустяну, Книж. магаз. «Гуттенбергъ». 461. 1—1

ՍՈՒԽՈՒՄԻ „Պրոմեթէյ" Գրախանութը
յայտնում է ի գիտութիւն ծովափնեայ հայ ազգաբնակչութեանը և դպրոցական հաստատութիւններին, որ առաջիկայ ուսումնական տարվայ համար ունի հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներով դասագրքեր, նաև դպրոցական ամէն տեսակի պիտոյքներ։ Դիմել՝ Сухумъ—«ПРОМЕТЕЙ».
(օ. մ.) 457. 3—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Սակաւաթիւ օրինակներ հետեւեալ հրատարակութիւններից
1) ԹՐՔԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ, Գր. Արծրունու, գ. 20 կ.
2) ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ, др. Гр. Арцруни, переводъ А. Аракелянца. . . . գ. 25 կ.
5) ВОСТОЧНЫЙ ВОПРОСЪ, др. Гр. Арцруни . . . գ. 05 կ.
6) ЭКОНОМИЧЕСКІЯ ПЕРСПЕКТИВЫ ВОСТОЧНОЙ АНАТОЛІИ, Ал. Калантаръ . . գ. 25 կ.
7) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ, Գ. Տէր-Ռուբինեանի, . . . գ. 20 կ.
8) ՀԱՅԿ. ԽՆԴԻՐՆ ԵՒ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐ. ՀԱՅՈՑ, Ա. Սարուխանի . . . գ. 2 ր. 50 կ.
9) ՀԱՅՔ Ի Կ. ՊՕԼԻՍ 20-Դ ԴԱՐՈՒ ՍԿԻԶԲԸ, Արծրունու, . . գ. 25 կ.
Վերոյիշեալ գրքերից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։
(7) 0—1

Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.